

Ցավում եմ, որ այս իրավիճակում հարցազրույցս օգտագործվեց բանտարկված մարդու դեմ՝ ադրբեջանցիների կողմից, միաժամանակ ես այդ մտքերը հայտնել եմ բազմիցս, պնդել եմ, որ Արցախի ղեկավարությունը քաղաքական սխալ էր գործել՝ ապավինելով Ռուսաստանին, եւ դա է պատճառը այս ազգային, գերիների համար անձնական ողբերգության:

Կարդացեք՝ էջ 4

Ատոմակայան ունեցող Հայաստանը համարյա ատոմային տերություն է, էներգետիկ անկախություն ունեցող երկիր: Ատոմակայան չունեցող Հայաստանն իրենցից կախված, ոչ մրցունակ, թերզարգացած, մնացորդային մի բան է: Ատոմակայանը Հայաստանի տնտեսության լոկոմոտիվն է, եթե այն գնա, իր հետեւից ամբողջ երկիրը կտանի, կքաշի առաջ:

Կարդացեք՝ էջ 5

«Քաղաքացիներին հաճոյանալու համար հոսանքի գինը չպիտի իջեցնել, որպեսզի 3 տարի հետո պրոբլեմ չառաջանա...»: Խորասուզվիր մտքի այս ջինջ օվկիանոսի ջրերի մեջ, փորձիր մի բան հասկանալ: Մտքի տիտան մեր առաջնորդը գտնում է, որ չի կարելի ժողովրդաշահ գործ ձեռնարկել, ինչն առաջարկել է ՀԷՑ-ի նախկին տնօրինությունը:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 211 (4112), 24 դեկտեմբեր, չորեքշաբթի, 2025

www.hraparak.am

Զրագածոտնի թեմի առաջնորդի, Վեհափառի քրոջ որդու՝ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանի տեսակցությունները դեռ արգելված են. նրան կարող է տեսակցել միայն մայրը: Մյուս հարազատներին, ԱԺ պատգամավորներին արգելված է, քանի որ նախաքննության մարմինն ընտանիք ասելով շատ նեղ մարդկանց շրջանակ է հասկանում: Օրինակ, Նարեկ Կարապետյանին արգելում են այցելել Սամվել Կարապետյանին, քանի որ «եղբորորդին ընտանիք չէ»: Փակ են նաեւ Արշակ սրբազանի այցելությունները, որը դեկտեմբերի 5-ից կալանավորված է: Նրան կարող են այցելել միայն եղբայրը՝ Արարատյան թեմի հոգեւոր սպասավոր Տեր Հակոբը, եւ տարեց մայրը: Բաց են տեսակցությունները Բագրատ սրբազանի համար՝ նախաքննության մարմինը թույլատրել է, եւ Միքայել սրբազանի համար, որի նկատմամբ արդեն առաջին ատյանի դատավճիռ կա, եւ իրավունք չունեն տեսակցություններն արգելել: Նկատենք, որ սրբազանները տարբեր ՔԿՀ-ներում են գտնվում. 2 ամիս առաջ կալանավորված Մկրտիչ սրբազանը՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում է, Բագրատ եւ Արշակ սրբազանները՝ ԱԱԾ-ին կից ՔԿՀ-ում, Միքայել սրբազանն այս պահին «Իզմիրլյան» ԲԿ-ում է, պատրաստվում է վիրահատության:

2026-ի ընտրություններին ընդառաջ, ընդդիմադիրները տեւական ժամանակ է, ինչ ակտիվ քննարկումների, բանակցությունների մեջ են՝ հնարավոր մեծ ճակատներով մասնակցելու շուրջ: Բայց մինչ այս պահը որեւէ միավոր չի ձեւավորվել, ընդդիմադիրները որոշ փակագծեր կբացեն տոներից հետո: Սակայն տեղեկություններ կան, որ ՀՀ առաջին նախագահի ՀԱԿ-ում ներքին քննարկումներում իշխում է այն դիրքորոշումը, որ դեմ չեն միավորմանը, բայց միայն իրենց առանցքի շուրջ: Խոսակցություններ կային, որ ՀԱԿ-ը «Մեր ձեւով» շարժման հետ է նաեւ բանակցում, սակայն մեզ ասացին, որ չի ստացվել: Իսկ Արման Թաթոյանի հետ համագործակցության էջը փակված են համարում, որովհետեւ վիրավորվել են ասուլիսում նրա արած հայտարարությունից, թե Փաշինյանին հեռացնելու միակ ճանապարհը ՀՀ 3 նախկին նախագահների չառաջադրվելն է: Երեկ ՀԱԿ անդամների հետ չհաջողվեց խոսել, թեեւ Լեւոն Զուրաբյանը բազմիցս է հայտարարել, որ քաղաքական տարբեր ուժերի հետ բանակցություններ են ընթանում, որոնք դեռ արդյունք չեն տվել: Ամիսներ առաջ էլ ՀԱԿ-ի, Ա. Թաթոյանի, ԼՀԿ-ի, Սուրեն Սուրենյանցի, «Ապրելու երկրի» եւ Վիկտոր Մնացականյանի միջեւ էին կոնսուլտացիաներ ընթանում՝ միավորման օրակարգով: Այս ցանկից հայտնի է, որ Սուրենյանցը Գագիկ Ծառուկյանի առաջնորդած ճակատում կլինի, իսկ մյուս ուժերի հարցում դեռ անորոշություն է:

Հայերին են դատում

Երեկ երկու տարբեր լուր դարձան օրվա ամենաընթերցվածը, մեկը՝ հայաստանյան իրականությունից, մյուսը՝ ադրբեջանական, բայց հավասարաչափ ցնցող ու տխրեցնող: Բաքվի բանտում գտնվող 70-ամյա արցախցի Վագիֆ Խաչատրյանը, որին շինծու մեղադրանքով դատապարտել են 15 տարվա ազատազրկման, առողջական վիճակի կտրուկ վատթարացման պատճառով տեղափոխվել է ադրբեջանական հիվանդանոց: Երկրորդը. Հայաստանի դատարանի կողմից շինծու մեղադրանքի հիման վրա 2 տարվա ազատազրկման դատապարտված Աշոտ Մինասյանին՝ Աշոտ Երկաթին, հայ իրավապահները տեղափոխել են կալանավայր, քանի որ կեղծ, հորինված, ապօրինի դատավճիռը մտել է ուժի մեջ: Այս երկու լուրերը լսող մարդն ի՞նչ պետք է մտածի՝ որ գործ ունենք համերաշխաբար իրար հետ համագործակցող երկու հակահայ իշխանությունների հետ, որոնք դատում են հայերին. մեկը՝ Երեւանում, մյուսը՝ Բաքվում: Որ արցախյան ազատամարտերում կռված, հայրենիքի համար կյանք տված մարդիկ հավասարապես պատժվում են եւ Բաքվում, եւ Երեւանում: Որ Բաքվի բանտերում գտնվող մեր հայրենակիցներին ազատելու ոչ մի փորձ նիկոլական իշխանությունը չի անելու, որովհետեւ եթե նման բանի ունակ լիներ, ապա հայ հայրենասերներին Հայաստանում չէր դատի: Ի դեպ, երեք պատերազմների մասնակցած Աշոտ Երկաթին դատել են ապօրինի զենք պահելու համար: Ավելի հեռուն գնացող եզրահանգումներ անողները կարող են ենթադրել, որ ոչ միայն Բաքվի դատարաններն են Ալիեւի հրահանգով գործում, այլ նաեւ Հայաստանինը, եւ, ըստ այդմ, հեռու չէ այն օրը, երբ դատարանի առաջ կկանգնեն կռված, հայրենիքի համար իրենց առողջությունը կորցրած եւ հայրենիքի պաշտպանության ժամանակ աչքի ընկած բոլոր հայերը: Որովհետեւ այս խմբի լավագույն ներկայացուցիչն ազնվագույն մարդ, իսկական հայ, իր հայրենիքի նվիրյալ Աշոտ Մինասյանն է:

Ավելի քան կես տարի է՝ ՔՊ-ում քննարկում են նախընտրական կարգախոսի հարցը: Թե ինչ մոգոնեն, որ հանրությանը կարողանան մոլորեցնել, մոռացնել տալ բոլոր արհավիրքները: Կանգ են առել խաղաղության վրա, որը, ըստ իրենց, այսօր միակ աշխատող կարգախոսն է, եւ որին հանգել են հարցումների արդյունքում: Համոզված են, որ Արցախի կորստից եւ մյուս աղետալի իրադարձություններից հետո ժողովուրդը միայն մեկ բան է ուզում՝ խաղաղություն: Թե ինչ տեսք ու ձեւակերպում կունենա կարգախոսը, առայժմ տարբերակներ են քննարկվում: Սակայն մոտավորապես հետեւյալով են առաջնորդվելու, թե 2021-ին ասել ենք՝ «Ապագա կա», ահա՝ բերել ենք այդ ապագան՝ խաղաղությունը:

ՆԱ ՊԵՏՔ Է ՀԵՌԱՆԱ

Արցախի քաղաքական եւ հասարակական կառույցները, ինչպես նաեւ՝ շարքային քաղաքացիները, չեն համակերպվում այն մտքի հետ, որ թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը «դավաճանել» է իրենց եւ Արցախին ու միացել տասը տիրադավներին՝ աջակցելով Նիկոլ Փաշինյանի եկեղեցաքանդ գործունեությանը: Մենք տեղեկացանք, որ Արցախի թեմական խորհուրդը շարունակում է ակտիվ աշխատանք տանել Մայր Աթոռի հետ՝ Արցախի հոգեւոր առաջնորդին փոխարինելու հարցով: Արցախցիներն այլեւս նրան չեն ընկալում որպես թեմի առաջնորդ եւ ուզում են, որ առաջնորդ նշանակվի մարդկային ու հոգեւոր բարձր արժեքներ ունեցող մի հոգեւորական: Բանն այն է, որ Արցախի թեմում Վրթանես եպիսկոպոսից բացի այլ եպիսկոպոս չկա, որը պարտադիր պահանջ է թեմի առաջնորդի համար: Մեզ ասացին, որ արցախցիները համաձայն են անգամ, որ հայաստանցի սրբազան դառնա իրենց թեմի առաջնորդ, օրինակ, Բագրատ սրբազանը: Նշենք, որ Նաիրի Հոխիկյանի նախաձեռնությամբ դեկտեմբերի 16-ից ստորագրահավաք է անցկացվում՝ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանին ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդի պարտականություններից ազատելու համար. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդն իր գործողություններով դեմ է դուրս եկել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոններին եւ միացել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախաձեռնած ազգուրաց քայլերին, մենք՝ ՀԱԵ Արցախի թեմի հավատավոր զավակներս, հրաժարվում ենք Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանին ընդունել որպես Արցախի թեմի առաջնորդի եւ դիմում ենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսին՝ խնդրելով նրան ազատել Արցախի թեմի առաջնորդի պարտականություններից եւ նրա փոխարեն նշանակել ՀԱԵ կանոններին հավատարիմ ուրիշ հոգեւորականի»: Նախօրեին Հոխիկյանը տեղեկացրեց, որ 300 մարդ ստորագրել է այս տեքստը:

ՀՈՐՍ ՏՆԻՑ ՉԵՄ ԲԵՐԵԼ ԷՍ ՊԱՇՏՈՆԸ, ՄԻ ՕՐ ԵԿԵԼ ԵՄ, ՄԻ ՕՐ ԷԼ ԿԳՆԱՄ

Ուղիղ մեկ շաբաթ առաջ լրավամիջոցներում տեղեկություն հայտնվեց, որ Շիրակի ՔՊ-ական մարզպետ Դավիթ Առուշանյանը հրաժեշտ է տվել պաշտոնին:

Այդ օրը կայանալու էր Շիրակի մարզպետի պաշտոնավարման մեկ տարվա հաշվետու ասուլիսը, սակայն ասուլիսից ժամեր առաջ մարզպետարանը հայտարարեց այն հետաձգելու մասին՝ «անհետաձգելի գործեր առաջանալու» պատճառաբանությամբ: Հետո հայտնի դարձավ, որ Առուշանյանին շտապ կառավարություն են կանչել, եւ մոտ ապագայում նա ազատվելու է աշխատանքից: Սակայն այդ լուրերի հաջորդ օրը՝ կառավարության նիստի օրակարգում չընդգրկվեց մարզպետի ազատվելու հրամանը, իսկ Նիկոլ Փաշինյանը նիստից հետո լրագրողների հետ զրույցում ոչ հերքեց, ոչ հաստատեց լուրը՝ ասելով. «Եթե կլինի համապատասխան որոշում, կիրապարակվի, կիմանաք»: Ըստ լուրերի՝ Փաշինյանը դժգոհ է մնացել դեկտեմբերի 7-ին Յոթ վերք եկեղեցում անցկացված հայտնի պատարագից եւ ձախողման «մեղավոր» է հռչակել մարզպետին, որը չի կարողացել մարդաշատ պատարագ ապահովել: Զրուցել ենք **Դավիթ Առուշանյանի** հետ:

- Պարոն Առուշանյան, ի վերջո, Դուք շարունակում եք պաշտոնավարել, թե՞ հրաժեշտ եք տվել մարզպետի պաշտոնին:

- Ոչ, բնականաբար, ես հիմա մարզպետարանում եմ, ամեն ինչ նորմալ է:

- Հնարավո՞ր է առաջիկա օրերին լինի Ձեր ազատման հրամանը:

- Կարող է մեկ տարի հետո լինի, կարող է... Չգիտեմ՝ առաջիկա օրերին ինչ է լինելու:

- Նիկոլ Փաշինյանը չէր հերքել լուրը, երբ հարց էին ուղղել:

- Չէր էլ հաստատել, ինչո՞ւ եք ասում՝ չի հերքել:

- Փաստորեն, Յոթ վերքի պատարագը կարող է Ձեզ համար ճակատագրական լինել:

- Յոթ վերքի պատարագի մասին որեւիցե մեկը որեւիցե տեղից ինձ չի զանգել, ինչ-որ բան ասել, որ ես կապ ունեմ դրա հետ: Պատարագն իր համար կազմակերպվում է, քահանաները պատարագ են անում, մարզպետն ի՞նչ կապ ունի պատարագի հետ: Այդ տեղեկատվությունն ամենաշատն է ինձ ջղայնացրել, որովհետեւ իրականության հետ աղերս չունի:

- Իսկ ինչո՞ւ Ձեր անվան շուրջ այդ խոսակցությունները ծավալվեցին, աղմուկ բարձրացավ, եթե չկա նման բան:

- Թող աղմուկ բարձրացնողները մտածեն, ես մարզպետն եմ, ես աշխատում եմ, հորս տնից չեմ բերել էս պաշտոնը, մի օր եկել եմ, մի օր էլ կգնամ: Բայց քանի դեռ ես մարզպետն եմ, իմ աշխատանքներն եմ կատարում, ես չեմ աշխատում, որ պաշտոն ունենամ, այլ պաշտոնն է գործիք՝ աշխատելու համար:

- Ինչո՞ւ չեղարկեցիք նախապես հայտարարված ասուլիսը:

- Որովհետեւ շտապ Երեւան գնալու հարց առաջացավ, դրա համար ես ներողություն խնդրեցի, այսօր էլ 100 սպորտսմեն եմ ընդունել մարզպետարանում, մեծ միջոցառում կազմակերպել:

- Իսկ շտապ Երեւան կանչելու օրը Ձեր պաշտոնանկության հարցը քննարկվե՞լ է:

- Շտապ կանչելու հարց չէր, ես եմ գնացել, պարզաբանելու հարցեր կային, մեր ներքին հարցերն են, չեմ կարող ասել՝ ինչ հարցեր ենք քննարկել:

- Գուցե Ձեր հրամանը հետաձգվում է, որովհետեւ արժանի փոխարինող չե՞ն գտնում:

- Չեմ կարող ասել:

- Նախընտրական ցուցակում գրանցվելու հայտ էիք ներկայացրել, Ձեզ գրանցվե՞լ են:

- Միանշանակ, միաձայն ընդունել են:

- Բոլորը կո՞ղմ են քվեարկել:

- Երեւի միաձայն ընդունած կլինեն, ես որտեղ եմ թերացել թե՞ որպես փոխքաղաքապետ, թե՞ ԱԺ պատգամավոր, թե՞ մարզպետ, չգիտեմ, մեր վարչության գործընկերներից գուցե ճշտեք:

- Ասում եք՝ Յոթ վերքի պատարագի հետ գործ չունեք, բայց մամուլում Ձեր օգնական-խորհրդականի նամակագրությունն էր հայտնվել, որով հորդորում էր մարդկանց պատարագին մասնակցել:

- Բնականաբար, բայց մարդ չեն հավաքագրել, երկրաշարժի օրը մարզպետարանը միշտ կազմակերպում է հուշարձանի մոտ պսակ դնելու միջոցառում: Ոչ միայն օգնական-խորհրդականներս, այլեւ բաժնի պետերն են զբաղված եղել՝ տեղեկացնելով մեր ենթակառույցներին, որ մարզպետը գնում է պսակ դնելու, ու ամեն տարի նույն բանն է եղել:

- Ու հորդորել են, որ բոլորի ներկայությունը պարտադիր է...

- Դա իրենք են որոշում՝ պարտադիր է, թե ոչ: Նամակը, որը հրապարակվել է, կուսակցականներին ուղղված է եղել: Այո, եթե մարզպետը, մարզի ղեկավարը գնում է պսակ դնելու, վարչապետն է գալիս պսակ դնելու, երկրի նախագահը, ԱԺ պատգամավորները, ուրեմն կուսակցականների ներկայությունն այդտեղ պարտադիր է:

- Ինչո՞ւ, չե՞ք կարող ինքներդ ծաղկեպսակ դնել...

- Խնդիրն այն է, որ երկրաշարժի օրը այդ կառույցները պիտի լինեն... Նույն ձեւով գնացել ենք նաեւ սեպտեմբերի 27-ին, ապրիլի 24-ին, թե՞ զինվորականներ են եղել, թե՞ ԱԻՆ, թե՞ դատախազություն, բոլոր նման միջոցառումները նույն ձեւով են կազմակերպվում: Հիմա անիմաստ ինչո՞ւ եք ինտրիգ ման գալիս:

- Որովհետեւ մեկ շաբաթ է անցել այդ լուրերից, Դուք հերքմամբ հանդես չեք եկել, առանց կրակ ծուխ չի լինում, չէ՞:

- Տարածողը թող հերքի, ես խնդիր չունեմ, ես հաշտ եմ բոլոր որոշումների հետ, որը մեր վարչությունը կամ վարչապետը որոշում է:

- Իսկ գուցե Ձեզնից դժգոհ են Գյումրիում առկա իրավիճակի՞ պատճառով, որ չեք կարողանում իշխանություն դառնալ:

- Գյումրու ընտրությունները վաղուց անցել են, այդ խոսակցությունները տարբեր են եւ բազմապիսի, ես միայն կարող եմ ասել, որ Յոթ վերքը զրո ազդեցություն ունի այս խոսակցությունների հետ: Նախ՝ պատարագը շատ լավ անցել է, մեր քահանաները շատ լավ պատարագ են արել:

- Ձեր քահանաներն ովքե՞ր են՝ Շիրակի թեմից որեւէ հոգեւորական չհամաձայնեց ներկա լինել:

- ՀՀ բոլոր քահանաները մեր քահանաներն են, ինչի՞ եք տարանջատում: Մեր սրբազանները եկել՝ պատարագ են մատուցել, եկեղեցին էլ լեփ-լեցուն է եղել, որովհետեւ դեկտեմբերի 7-ի բոլոր պատարագներն այդպես լեփ-լեցուն են անցնում, որեւէ մարդու հրավիրելու կարիք էլ չկար:

- Այդ պատարագին՝ Փաշինյանի մասնակցությամբ, գյումրեցիներ գրեթե չկային, ովքեր էլ եկել էին, ամոթանք էին տալիս իշխանականներին:

- Ուրեմն 120 հազար գյումրեցի կա, ես չգիտեմ, Դուք որ գյումրեցիների մասին եք խոսում, Դուք մտածում եք, որ 120 հազար հոգին էլ նույն ձեւով են մտածում, հետո, որ ասում եք՝ գյումրեցիներ չկային, բա ովքե՞ր էին:

- Շրջիկ հավատախումբը:

- Շրջիկ հավատախումբ չի լինում, բերեք՝ բառերի մեջ էլ մի քիչ զգույշ լինենք, էդ ի՞նչ լեքսիկոն ենք մտցրել հասարակության մեջ:

- Մենք չենք մտցրել: Տրամաբանորեն, Շիրակի թեմի հոգեւորականները պետք է պատարագ մատուցեին, ինչո՞ւ եք զարմանում:

- Տրամաբանորեն շատ բան պիտի լինի, որը չի լինում:

- Օրինակ:

- Շատ բան:

- Իսկ առաջիկա կիրակի գալո՞ւ եք Մայր Աթոռի պատարագին:

- Ես նման տեղեկատվություն չունեմ, որ որոշում էլ ունենամ:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ԵՎ ԳԱԼԵՅԱՆԻ ԴԵՊՔԵՐԻՑ ԸՆԿՃՎԵՑԻՆՔ, ԲԱՅՑ ՄԱՐՏԱԿԱՆ ԵՆՔ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ

«Հրապարակի» զրուցակիցը կապիտան Իշխան Պետրոսյանի այրին՝ **Արուս Հարությունյանն** է:

- Հայ առաքելական եկեղեցու դեմ Նիկոլ Փաշինյանը բացահայտ պատերազմ է սկսել: Նա անում է ամեն հնարավոր բան, որ Գարեգին Բ կաթողիկոսը լքի վեհարանը: Մենք տեսնում ենք, որ մարդիկ Փաշինյանի այս արշավին չեն աջակցում, վարչական ռեսուրսի կիրառմամբ նա ընդամենը մի քանի հարյուր մարդ է կարողանում հավաքել, սակայն շարունակում է հակաեկեղեցական արշավը:

- Վերջնականապես Հայաստանն ուզում են փլուզել, խառնել եւ վերացնել: Սրանք ամեն ինչի ընդունակ են: Ինչ վերաբերում է այդ եպիսկոպոս կոչեցյալ նյութապաշտներին, ապա դրանք միայն իրենց շահի մասին են մտածում: Ես չեմ հավատում, որ շահից բացի այլ շարժառիթ են նրանք ունեցել: Ուղղակի վախեցան, որ իրենց ունեցվածքից կարող են զրկվել: Բոլորիս էլ հայտնի է, թե ով է Կճոյանը եւ ինչ էր ու հիմա ով է ու ինչ է.... որպեսզի իր ցեխերը ջրի երես չհանեն, դրա համար մտավ Նիկոլի տակ: Հպատակներն էլ՝ հետեւից: Մենք՝ բոլորս, տեսնում ենք, թե ովքեր են Եկեղեցուն ծառայում եւ ովքեր են շահին ծառայում: Շատ լավ ամեն ինչ երեւում է:

- Իսկ Արցախի թեմի առաջնո՞ր դը: Ո՞վ կմտածեր, որ նա նման քայլի կդիմի:

- Ով գիտի, թե ինչեր է իր հետ Արցախից բերել Արցախից փախած թեմի առաջնորդը: Նա էլ է վախենում իր ունեցվածքը կորցնելուց: Նրանք՝ բոլորը, ազգուրաց, ժողովրդի արյունն ու քրտինքն ուրացող տգրուկներ են, ովքեր մխրճվել են ազգի արյան տակ, ու դրանցից պրծում չկա: Ոչ մի դեզինֆեկցիա մեզ չի փրկի դրանցից: Ուղղակի նողկալի են:

- Եկեղեցուն հավատարիմ սրբազանները բանտարկված են՝ ահաբեկչության փորձի, զինված հեղաշրջման կոչի եւ մարիխուանան ուրիշի ուսապարկը գցելու մեղադրանքներով: Հավատո՞ւմ եք այդ մեղադրանքներին:

- Իսկ ո՞ր մի սթափ մարդը կարող է հավատալ այդ ամենին: Միայն Աջապահյանի աչքերին նայելով՝ չի կարող հավատալ այդ մեղադրանքներին.... երբ առհասարակ լսում եմ այս թեման, անկախ ինձնից, հուզվում եմ, որովհետեւ բանտախուցը նրանց տեղը չէ: Այսօր նրանք մեզ պետք է առաջնորդեին, այլ ոչ թե բանտ ընկնեին: Նրանք թե՞ գաղափարապես, թե՞ հոգեպես կարող էին հայ ժողովրդի կողքին կանգնել՝ այս նեղ վիճակում: Նիկոլը վախեցավ ընդամենը մեկ բանից՝ սրբազանների գաղափարից: Միքայել Աջապահյանն այնպիսի հոգեւոր զորություն ունի, որ ոչ մեկը չի կարող նրան հաղթել: Նրան կարող են միայն ֆիզիկապես փակել.... հոգեւոր առումով՝ երբեք:

- Մի քանի զոհվածի ծնողի բանտարկելով, կարծես, կարողացան որոշակիորեն լռեցնել այդ զանգվածին, որն ուներ պայքարի մեծ պոտենցիալ:

- Չէ, իրականում՝ ոչ: Ուղղակի Արա Ռոստոմյանի եւ Գարիկ Գալեյանի հետ կապված դեպքերը մի փոքր հոգեպես ընկճեցին մեզ, սակայն մենք մարտական ենք տրամադրված, ու այնպես չէ, որ ոչինչ չենք անում: Հականիկոլիզմ ենք պրոպագանդում ամեն մեկս մեր շրջապատում, մինչեւ տեսնենք, թե ինչ կլինի: Մենք տեսանք, որ միայն դուրս գալով ու բղավելով հարց չի լուծվում, գոնե մարդկանց շրջանում աշխատենք, որ 2026-ի ընտրություններում մի բանի հասնենք:

- Իսկ ստացվո՞ւմ է մարդկանց աչքերը բացել:

- Պատկերացրեք, որ մեր ժողովուրդն ահագին արթնացել է: Մարդիկ սթափ են բավականին: Գրեթե բոլորն ունեն աշխատանքի կարիք: Սամվել Կարապետյանն ունի մեծ պոտենցիալ: Մարդիկ Կարապետյանի հետ հույսեր են կապում: Չգիտեմ, ես լիահույս եմ, որ 2026-ին սրանք չեն ընտրվի: Իմ կյանքի վերջին լուսավոր կետը 2026 թվականի ընտրություններն են: Եթե դա էլ չեղավ, աշխարհին ինձ համար կփլուզվի: Ինչ վերաբերում է Հայ առաքելական եկեղեցուն, ապա պետք է հիշել, թե ինչ եղավ 1915 թվականին: Մարդիկ կոտորվեցին հանուն քրիստոնեության: Նրանք, ովքեր հավատք չունեին, մնացին այնտեղ ու հպատակվեցին: Մեր պատմությունը մի՞թե դասեր չի տալիս մեզ: Թեպետ սրանց համար պատմությունը դարձել է առասպել, Մաշտոցը՝ անկարեւոր մեկը: Անգամ ամենավատ երազում նման բան չէի կարող տեսնել:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼՈՒՐՋ ՀԻՄՆԱՐԿԻՑ՝ ՓՈՔՐՈԳԻ ՊԱՐԱԳԼԽԻ ԿԱՆՏՈՐԱ. ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ ՆԱՐԵԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ

Վերջին օրերին ուշադրությամբ հետեւում եմ Եկեղեցու շուրջ տեղի ունեցող զարգացումներին, որոնց բարձրակետը դեկտեմբերի 18-ին տեղի ունեցած բորենիախմբի տապալված գրոհն էր Մայր Աթոռի տարածքում:

Ռեժիմի պարագլուխն իր համար «կյանքի ու մահվան» հարց է դարձրել Վեհափառ հայրապետին «հեռացնելը» եւ այդ ճանապարհին ոչ մի միջոցի հարցում խտրություն չի դնում:

10 տիրադավ եպիսկոպոսներին տարատեսակ կոմպրոմատներով իր շուրջը հավաքելով՝ պարագլուխը փորձելու է նրանց որպես գործիք մինչեւ վերջ օգտագործել Եկեղեցու դեմ եւ այդ գործիքը մաշվելուն պես վերջիններիս կամ դեն է նետելու, կամ հրապարակելու է դրանց վրա ունեցած կոմպրոմատները: Սա է Հայաստանում հաստատված ռեժիմի էությունը, բայց որ 10 տիրադավները պատրաստ էին անգամ Մայր Աթոռը գրոհել, նույնիսկ ինձ համար զարմանալի եւ եղկելի էր: Ավելի եղկելի էր տեսնելը, թե ինչպես էին այս 10 հոգանոց տիրադավներին ուղեկցում ԱԱԾ-ի, ոստիկանության եւ այլ ստորաբաժանումների քաղաքացիական հագուստներով խմբերը: Իսկ բորենիական հարձակման մնացյալ թշվառությունն ապահովում էին տեսախցիկների առաջ հայհոյող սակավաթիվ տավրոսսափեյանները, որոնք այնպիսի ջանասիրությամբ էին հայհոյանքներ տալիս իրենց սաստողներին, ասես ռեժիմի պարագլխից իրենց՝ այդ վիճակում հայտնվելու մուռը հանելիս լինեին:

Ի հարկե, ռեժիմի «զինվորների» կողմից հնչեցված հայհոյանքներն ու հանրության ներկայությամբ Մայր Աթոռի դռները կոտրելու փորձերը որեւէ դեպքում խուլիգանության հանցակազմ «չեն պարունակում»: Հիշեցնեմ, որ մեր երկրում խուլիգանության հանցակազմի անբաժանելի մաս է կազմում ռեժիմին քննադատելը եւ հայտնի «հետույք» բառը:

Ինչեւէ, անկախ ներդրված տիտանական ջանքերից՝ կարող ենք արձանագրել, որ գործ ունենք ռեժիմի պարագլխի հերթական ձախողված փորձի հետ, որում իրենց մեծ ներդրումն ունեն դեկտեմբերի 18-ի ասպատակությանը դիմադրելու գնացած հավատավոր ժողովուրդը, որոնց թվաքանակը մի քանի անգամ ավել էր տավրոսսափեյանների, ուսադիրների պատվի մասին մոռացածների գլխաքանակից: Հենց հավատավոր ժողովուրդն էր, որ այդ օրը կասեցրեց ռեժիմի հերթական դավադրությունն ընդդեմ Հայ առաքելական եկեղեցու:

Զարմանալի չէ (շատ ցավալի է), որ այս, ինչպես նաեւ մեր երկրում տեղի ունեցող ռեժիմի հակառակորդներին ճնշելու եւ հետապնդելու հարցում պարագլխի հիմնական գործիքն է դարձել Ազգային անվտանգության ծառայությունը: Ցավալի է տեսնել իմ լսած հարուստ համակարգային կառույցի հրապարակային ոչնչացման գործողությունը, որը, վստահ եմ, ռեժիմի պարագլխի կողմից հատուկ է արվում, որպեսզի հնարավորինս անդառնալի ոչնչացնի ԱԱԾ-ն որպես կառույց:

Կործանման անդառնալիության կետը շատ մոտիկից տեսանելի դարձավ, երբ ռեժիմի կուսակցական պաշտոնաթերթը, տեղադրելով մի լուսանկար, գրեց, որ այն ստացել է ԱԱԾ-ից (այստեղ ԱԱԾ-ն արդեն կուսակցաթերթի աղբյուր դարձավ), եւ իբր այդտեղ տեղադրված «փաստաթուղթը» հավաստում է այն մասին, որ Եզրաս արքեպիսկոպոսը սովետական ՊԱԿ-ի գործակալ է:

Անկեղծ ասած, երբ հեռուստացույցով լսեցի այդ տեղեկատվությունը, ամբողջությամբ չէի հավատում դրա ճշմարտացիությանը: Նախ, Սովետական Միության տարիներին ՊԱԿ գործակալ լինելը որեւէ կերպ չէր նշանակում օտարերկրյա հատուկ ծառայության գործակալ լինել: Երկրորդ. օտարերկրյա հատուկ ծառայությունների գործակալ լինելը պետական դավաճանություն է, եւ երբ երկրի ղեկին նստած մարդն ասում է, որ իր երկրի հատուկ ծառայությունների հետ որեւէ խնդիր չի ներկայացնում: Ավելին, որոշ դեպքերում նմանատիպ «համագործակցությունը» բավականին մեծ օգտակարություն կարող է բերել երկրի ազգային անվտանգությանը:

Ընդհանրապես, գործակալական ցանցը հարյուրամյակներ շարունակ աշխարհի բոլոր՝ մեզ հայտնի հատուկ ծառայությունների միակ գործիքակազմն է եղել: Հեռավոր 19-րդ դարասկզբին, երբ դեռ չկային տելեգրաֆն ու օդային հաղորդակցության միջոցները, հետախուզական նոր ձեւավորվող ապագա հսկաները հասկացել էին, որ իրենց գործին միակ օժանդակող համակարգը գործակալական ցանցերն են, եւ հենց այդ ժամանակներից է գալիս գործակալին որեւէ պարագայում չհանձնելու, անունը չհրապարակելու՝ իրեն հարգող ցանկացած հատուկ ծառայության ոսկե կանոնը: Ավելին, հատուկ ծառայության ղեկավարները շատ հաճախ իրենք էլ չեն տիրապետում գործակալական ցանցի անուններին (այլ հարց է՝ ծածկանունը), քանի որ դա կարող է վտանգել գործակալին եւ կասկածի տակ դնել աշխատանքային արդյունավետությունը: Իսկ, մյուս կողմից, ծառայության ղեկավարի համար գործակալական ցանցի տվյալներին տիրապետելն անվստահության նշան է սեփական հիմնարկի համապատասխան բաժնի պետերի եւ օպերատիվ աշխատողների նկատմամբ:

Այս կանոնը մինչ օրս գործում է աշխարհի՝ մեզ հայտնի բոլոր հատուկ ծառայություններում, որոնց երկրի ղեկավարները երբեք իրենց թույլ չեն տա այդ ծառայության պետերից գործակալական ցանցի մասին տեղեկատվություն պահանջել, քանի որ դա կարող է հանգեցնել վատ հետեւանքների: Ի դեպ, կարծում եմ, դատարանի բակում երրորդ նախագահի տված մեկնաբանությունը՝ գործակալների հետ կապված, հենց վերոգրյալ ոսկե կանոնի մասին էր, ինչը նաեւ շատ մեղմ ակնարկ էր պարունակում իր մեջ՝ ուղղված այսօր մեր ԱԱԾ-ն քանդողներին:

Նիկոլ Փաշինյանը մեր օրերում այնքան է իջեցրել ամեն ինչի նշաձողը, որ վերը նշված սկզբունքներն ու կանոնները չէին էլ կարող վերջինիս համար զսպող հանգամանք լինել, եւ սա էլ պետք է ապականվեր ու պղծվեր: Եվ հիմա ո՞վ կարող է ասել, թե այսքանից հետո մեր երկրի ԱԱԾ-ի հետ քանի իրական օգուտ տվող մարդ կհամագործակցի Հայաստանի ներսում: Իսկ այս աբսուրդի թատրոնը տեսնելով ո՞ր մի խելագար օտարերկրացին պատրաստ կլինի հավաքագրվել սեփական արխիվները կամ դրանց իմիտացիան «ճ» կլասի մեդիաներով հրապարակող կառույցի կողմից: Հարցերը հռետորական են, բայց տեղի ունեցողի հետեւանքները՝ աղետալի մեր երկրի դեռեւս քիչ թե շատ ինստիտուցիոնալ հիշողություն ունեցող կառույցի համար:

Պատկերացրեք՝ արտերկրում երբեմնի հետախուզական գործողություններ կատարած, երկրի ներսում հակահետախուզությամբ եւ հակահաբեկչական գործողություններ իրականացրած կառույցն այսօր վերածվել է ինչ-որ փոքրոգի արարածի ներքաղաքական քմահաճույքները կատարող փոքրիկ կանտորայի: Մի օր հակահաբեկչական «Ալֆա»-ն դիմակներով ներխուժում է Վազգենենց ու մեր տուն, վախեցնում քաղաքական հակառակորդների երեխաներին, մյուս օրը 7-րդ վարչության աշխատակիցները գնում են Նիկոլի համար քահանա համոզելու, հաջորդ օրը վարչության պետերը կապարակնքում են եկեղեցին, հետո, ըստ մամուլում շրջանառվող եւ չհերքվող տեղեկությունների, զանգում են դատավորներին եւ ստիպում կալանք տալ փոքրոգի արարածի հակառակորդներին, իսկ որպես վերջաբան, ստիպում են հրապարակել ՊԱԿ-ի արխիվի՝ իմիտացիա ենթադրող փաստաթուղթ եւ վերջնականապես փակում հիմնարկի հիմնական նշանակության վերջին դուռը:

Անկեղծ ասեմ, ես այս ամենին մեծ ցավով եմ նայում, քանի որ մասնագիտության բերումով մեծ հետաքրքրություն եմ ունեցել հատուկ ծառայությունների կառուցվածքի եւ պատմության նկատմամբ: Երկար տարիներ խորն ուսումնասիրել եմ աշխարհի ամենահայտնի հատուկ ծառայությունների պատմությունն ու արված օպերացիաները: Մեծ բարեբախտություն եմ ունեցել անձամբ շփվել ՀՀ մի քանի պաշտոնաթող ԱԱԾ պետերի հետ եւ երբեք չեմ պատկերացրել, որ կգա մի օր, որ մեծ ԱԱԾ-ն ինչ-որ փոքրոգի անադեկվատ ռեժիմի պարագլուխ կհասցնի այս օրվան: Բայց, ինչպես ասում են, սա էլ կավարտվի, եւ ապագայում, թեկուզ՝ ոչ հրապարակային, գնահատականներ կտրվեն այս օրերի գործողություններին, իսկ մինչ այդ դիմացեք, ԱԱԾ-ի նվիրյալներ, դիմացեք, պարոնայք սպաներ:

ԱԱԾ հակահաբեկչական ջոկատի կողմից ռեժիմին քննադատելու համար ձերբակալված եւ կալանավորված, քաղբանտարկյալ Նարեկ Սամսոնյան

«Արմավիր» ՔԿՀ 23.12.2025թ.

3 ՀՈԳԻ ԷԻՆ ԱԳՐԵՍԻՎ՝ ՍԱՓԵՅԱՆԸ, ԴՈՒՐԳԱՐՅԱՆԸ ԵՎ ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Տեր Վրթանես քահանա Բաղալյանի սրտի վրա եւս 3 ստենտ են տեղադրել: «Ինձ լավ եմ զգում, շատ շնորհակալ եմ մեր բանիմաց ու շատ հոգատար բժիշկներին ու բժշկական անձնակազմին, շուտով հնարավորություն կունենամ վերադառնալ իմ հոգեւոր ծառայությանը»,- ասաց **Տեր Վրթանեսը**: Անդրադառնալով Օպերայի փոխտնօրեն Վրեժ Դուրգարյանի հետ կապված դրվագին՝ նա ասաց, որ վերջինս կանգնել էր կաթողիկոս Ալեքսանդր Ջուղայեցու տապանաքարի վրա եւ կոչ էր անում՝ տաճարի դուռը հարվածելով բացել ու ներս մտնել: «Երեւի տասնյակ անգամներ իրեն հորդորեցի իջնել, կանգնել էր տապանաքարի վրա ու կոչ էր անում՝ հարվածելով կոտրել, բացել դուռը, որը Մայր Թերեզա Թահիրյանն էր նվիրել Խրիմյան Հայրիկին, եւ որը բացառիկ արժեք է ներկայացնում իրենից: Տասնյակ անգամներ խնդրեցի, հորդորեցի՝ իջնել, սակայն նա այն վիճակում էր, որ ունակ չէր խոսք հասկանալ, ստիպված՝ բարձրացա սյան վրա ու իր ուսից քաշելով՝ իջեցրի: Անհնար էր նայել, թե ոնց է կանգնել կաթողիկոսի գերեզմանաքարի վրա ու անընդհատ գոռում, տաճարի դուռը կոտրելու կոչեր անում: Այդ ընթացքում կրծքավանդակումս սուր ծակոցներ զգացի»,- պատմեց Տեր Վրթանեսը: Այդ պահին էլ երեւի հենց ինֆարկտ է տարել, սակայն դիրքերը չի զիջել: «Մայր տաճարը պաշտպանողներին ոստիկանության մի հատվածը հրելով այն կողմ տարավ, ու եկեղեցու վրա գրոհողներն առաջ եկան, սակայն ի սկզբանե Մայր Աթոռ եկած ոստիկանների խումբն էր ինձ պաշտպանում, իրենց շնորհիվ իմ վրա չհարձակվեցին: Այդ մարդիկ սթափ չէին, նրանք ինչ-որ բանի ազդեցության տակ էին՝ ոմանց վրայից ալկոհոլի հոտ էր գալիս: Իսկ քաղաքացիական համազգեստով ուժայինները շատ ագրեսիվ հարվածներ էին հասցնում լրագրողներին, որոնց հիմնական մասն աղջիկներ ու կանայք էին, ու պարեկներին: Չեք պատկերացնի, թե ինչպես էին հարվածում պարեկներին, որոնք փորձում էին հոգեւորականներին պաշտպանել»,- պատմեց նա: Ինչ վերաբերում է եկեղեցին ասպատակողներին, ըստ Տեր Վրթանեսի՝ երբ տաճարի դուռը բացվել է, ու այնտեղից սկսել են մարդիկ դուրս գալ, վերջիններս նահանջել են. «Երբ տեսան մայր տաճարից դուրս եկող տղամարդկանց, միանգամից զսպվեցին»: Շեշտում է, որ ամենից ագրեսիվ վարքով աչքի են ընկել Թալինի քաղաքապետ Տավրոս Սափեյանը, օպերային թատրոնի փոխտնօրեն՝ Կարեն Դուրգարյանի եղբայր Վրեժ Դուրգարյանը եւ Կարեն Պետրոսյանը՝ «Նոր Հայաստան՝ նոր հայրապետ» տխրահռչակ շարժման ղեկավարներից մեկը՝ ԵՊՀ Շիրակի մասնաճյուղի ռեկտորը:



Հայկա ԱԼՈՅԱՆ

ԳԵՐԻ

ՏԻԳՐԱՆ ԽԶՄԱԼՅԱՆԸ ՁՂՁՈՒՄ Է, ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆԸ՝ ՈՉ

Ադրբեջանական մեդիադաշտում հրապարակվել է մի նողկալի ֆիլմ՝ նվիրված Ռուբեն Վարդանյանին, որտեղ հարյուրավոր կեղծիքների միջոցով փորձել են սեւացնել հայազգի գործչի կերպարը: Ֆիլմում օգտագործվել է նաեւ մի խումբ հայերի խոսքը՝ Սամվել Բաբայան, Տիգրան Խզմալյան: Մարդիկ փորձել են ճշտել՝ ում է տվել հարցազրույցը Սամվել Բաբայանը, եւ ինչպես է նրա խոսքը հայտնվել ադրբեջանական ֆիլմում, այն էլ ի վնաս Բաքվի բանտում խոշտանգվող հայազգի գործչի:

Հարցազրույց տալու առաջարկով Սամվել Բաբայանին դիմել է հայազգի Միքայել Դիշունցը, հայտնել են Սամվել Բաբայանի մամուլի ծառայությունից:

«Վերջին օրերին ադրբեջանական որոշ լրատվամիջոցներում տարածված եւ տեղեկատվական աղմուկ առաջացրած ֆիլմի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում պարզաբանել հետեւյալը. «Հարցազրույց տալու առաջարկով Սամվել Բաբայանին դիմել է հայազգի Միքայել Դիշունցը՝ ներկայացնելով իսպանական TPTM Media Spain ընկերության նախաձեռնությունը՝ «Կամուրջներ եզրին. Հայաստանը՝ մայրցամաքների միջեւ» խորագրով վավերագրական ֆիլմի նախագիծը: Նախագծի նպատակը, ըստ ֆիլմի ռեժիսոր Կարմեն Մարկեսի կողմից ստորագրված եւ ներկայացված փաստաթղթի, անդրադառնալն էր Հայաստանի եվրոպական ինտեգրման հեռանկարներին, Արցախից հետո ձեւավորված նոր իրողություններին, տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական զարգացումներին, տնտեսական վերափոխումներին»: Մոտ երկու ժամ տեւած հարցազրույցից ֆիլմում ներառվել է ընդամենը մեկ րոպեանոց հատված, որը վերաբերում է Ռուբեն Վարդանյանին: Վերջինիս գործունեության վերաբերյալ Սամվել Բաբայանը հանդես է եկել հրապարակային եւ հետեւողական դիրքորոշմամբ, որից չի հրաժարվել եւ բազմիցս արտահայտվել է հանրային հարթակներում: Միաժամանակ հարկ ենք համարում ընդգծել, որ հարցազրույցի տվյալ հատվածի՝ ադրբեջանական մեդիայում հայտնվելու հանգամանքները ենթակա են պարզաբանման ոչ թե Սամվել Բաբայանի, այլ Հայաստանում ֆիլմի կազմակերպչական աշխատանքները համակարգած անձանց կողմից»,- ասված է հայտարարության մեջ: Իր հերթին Սամվել Բաբայանը ֆեյսբուքյան իր էջում նույն բանն է գրել, սակայն դրանից իրողությունը չի փոխվում՝ անհասկանալի հանգամանքներում սահմանն անցած անձը, որը, թվում է՝ Ադրբեջանի թիվ 1 թշնամին պետք է լիներ, լուտանքներ է տեղում ադրբեջանական բանտում հայտնված եւ մեկուկես տարի խոշտանգվող Ռուբեն Վարդանյանի հասցեին, փոխանակ պատասխանատվություն կրեր մի մարդու համար, ով իր փափուկ կյանքը թողել՝ գնացել էր Արցախ, իր հայրենակիցների հետ պայքարելու:

Աղմուկ բարձրացրած ֆիլմում, սակայն, ոչ միայն Սամվել Բաբայանն է Բաքվի բանտում գտնվող Վարդանյանին քննադատում, այլեւ Հայաստանի եվրոպական կուսակցության նախագահ Տիգրան Խզմալյանը: Խզմալյանը Վարդանյանին ներկայացնում է որպես «Պուտինի տրոյական ձի», իսկ Սամվել Բաբայանն ասում է՝ «տո Վարդանյանից ինչ լիդեր, նա ով ա ընդհանրապես»:

Ինչո՞ւ են հայազգի անձինք գերության մեջ հայտնված անձի մասին նման հայտարարություններ անում: **Տիգրան Խզմալյանին** «Հրապարակը» հարցրեց՝ տեղյա՞կ է եղել, որ իր հայտարարությունն ադրբեջանական ԶԼՄ-ներն օգտագործելու են, եւ, առհասարակ, ինչո՞ւ է գերության մեջ հայտնված անձի մասին նման հայտարարություններ արել: Խզմալյանն ասաց. «Մեկնաբանությունը տվել եմ մեկ տարի առաջ, երեւի հունվար-փետրվար ամիսներն էին, հիշում եմ, որ ձմեռ էր: Հարցազրույցը տվել եմ մի սփյուռքահայ լրագրողի, որի անունը, անկեղծ ասած, չեմ մտաբերում: Այն տեղի է ունեցել Երեւանում: Խոսք գնաց Հայաստանի քաղաքականության մասին ընդհանրապես, սակայն չգիտեմ, պատկերացում չունեմ, թե այդ նյութն ինչպես հայտնվեց ադրբեջանական մամուլում, սակայն հասկանալի է, որ դժվար չէ Յութուբից այն հանելը, թեպետ ես երբեք չէի մտածի, որ այն երբեւէ կարող է հայտնվել ադրբեջանական հարթակներում: Ցավում եմ, որ այս իրավիճակում այն օգտագործվեց բանտարկված մարդու դեմ՝ ադրբեջանցիների կողմից, միաժամանակ ես այդ մտքերը հայտնել եմ բազմիցս, պնդել եմ, որ Արցախի ղեկավարությունը քաղաքական սխալ էր գործել՝ ապավինելով Ռուսաստանին, եւ դա է պատճառը այս ազգային, գերիների համար անձնական ողբերգության: Իմ արտահայտած միտքն իրականում դա է եղել: Ես ասել եմ, որ մի ամբողջ սերունդ, այդ թվում՝ Ռուբեն Վարդանյանը, տրոյական ձիեր են: Այս ենթատեքստում ադրբեջանցիներն այն ի շահ իրենց էին օգտագործել, որովհետեւ Հայաստանի իշխանությունները մինչ օրս խուսափում են ասել, որ ադրբեջանցիների կողմից Ղարաբաղի զավթումը եւ Հայաստանի սուվերեն տարածքների գրավումը եղել է Ռուսաստանի համաձայնությամբ, խրախուսմամբ եւ ՌԴ-ի ծրագրով: Ես այդ միտքը հիմա էլ եմ պնդում, սակայն ցավ եմ ապրում, որ իմ ասածները հայտնվեցին այդ ենթատեքստում: Այն իսկապես ինձ ցավ եւ անհանգստություն է պատճառում»:

Բայց արժե՞ առհասարակ քննադատել այն մարդկանց, ովքեր խոշտանգվում են Բաքվի անմարդկային բանտերում: Ի՞նչ տարբերություն՝ հիմա, թե մեկ-երկու տարի առաջ: «Ես այդ նույն բանն ասում եմ նաեւ հայկական եթերներից, այդ անգամ խոսել եմ անգլերեն, սակայն իմ ասածը ներքին հայկական խոսակցություն էր, զուտ քաղաքական գնահատական է, անձնական գնահատական չէ: Անկախ այն բանից, թե ես ինչպես եմ վերաբերվում նրանց, գտնում եմ, որ ոչ թե Ադրբեջանը, այլ Հայաստանը պետք է նրանց մասին դիրքորոշում հայտնի կամ մեղադրի, նրանք, բնականաբար, քաղաքական բանտարկյալներ են, իմ ասածը ներքին քննարկման համար է եղել, սակայն 21-րդ դարում կան անգլերեն հասկացողներ: Թեպետ բանտարկյալների մասին խոսելը ճիշտ չէ, նրանք պետք է կարողանան պաշտպանվել»:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՆԱՏՕ-Ն, ԵՄ-Ն ՉԱՂԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ, ՈՐ ՀԱՐՄԱՐ ՊԱՀԻ ՄՈՐԹԵՆ

«Հրապարակի» զրուցակիցն արտակարգ եւ լիազոր դեսպան **Զյունիկ Աղաջանյանն** է:

- ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը որոշում է կայացրել՝ հետ կանչել Հայաստանում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինին: Կա տեսակետ, որ դա կապված է աշխարհաքաղաքական որոշ զարգացումների, մասնավորապես՝ Թրամփ-Պուտին հարաբերությունների մերձեցման հետ: Ասել է թե՝ ԱՄՆ-ն Հայաստանի վերահսկողությունը հանձնում է Պուտինին: Ըստ Ձեզ՝ այդ վերլուծությունները որքանո՞վ են իրականությանը մոտ:

- Ո՛չ առաջինն է այս դեսպանը, ո՛չ էլ վերջինը: ԱՄՆ-ի քաղաքական գերատեսչության սկզբունքներից է երեք տարով դեսպան նշանակելը: Այդ մասին նախապես հայտարարեցին, որովհետեւ փոփոխությունները կատարվելու են օգոստոսին: Սովորաբար լինում է այդպես: Բնականաբար, այս վարչակարգի պարագայում կարեւորագույն տեղերում լինելը կարեւոր է, սակայն չեմ կարծում, թե Հայաստանն այդ երկրների շարքերում է: Ըստ իս՝ սա հերթական փոփոխությունն է: Եկեք հաշվի առնենք, որ ԱՄՆ քարտուղարության վերաբերմունքը մեր տարածաշրջանի հանդեպ էապես չի փոխվել: Հայաստանի գործող իշխանությունների օրոք մեծացրին ամերիկյան ներկայությունը, մեզ համար վճռորոշ թուրքական երթուղիների ներկայությամբ, եւ այդպես էլ այժմ շարունակվում է: Պարզապես կարող են փոխված լինել դրսեւորման ձեւերը, ինչպես ասում են՝ փաթեթավորումը փոխվում է, բովանդակությունը՝ ոչ: Ես չեմ կարծում, որ տեղի ունեցածն աշխարհաքաղաքական լուրջ փոփոխությունների կամ տարածաշրջանն աշխարհաքաղաքական ուժերի միջեւ բաժանելու դրսեւորում է: Ինձ թվում է՝ այդ տարբերակը ոմանց համար ցանկալի է, սակայն եկեք ցանկալին ու իրականությունը տարանջատենք:

- Նիկոլ Փաշինյանը մոտ 10 օր առաջ ԵՄ-ից օգնություն էր խնդրում՝ ռուսական կողմից եկող հիբրիդային պատերազմի դեմ պայքարելու համար, սակայն մի քանի օր անց էլ ՌԴ էր մեկնել եւ երջանիկ դեմքով լուսանկարներ ու տեսանյութեր էր հրապարակում այնտեղից: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն էլ իր հերթին ողջունում էր հայ-ադրբեջանական հնարավոր խաղաղության գաղափարը: Այս ամենը ոմանց համար հասկանալի չէ: Ի վերջո, ինչ պրոցեսներ են սրանք:

- Ես չեմ կարծում, որ Նիկոլ Փաշինյանն իրականում իր քաղաքականության մեջ փոփոխություններ է կատարում: Ռուսաստանում էլ Փաշինյանի խաղերը շատ լավ հասկանում են եւ գիտակցում են, թե ինչի է ուզում հասնել նա այս քայլերով: Ասեմ, որ ԵՄ-ի այն հայտարարությունը, թե իբրեւ Հայաստանն է խնդրել, որպեսզի իրենք աջակցեն հիբրիդային պատերազմի դեմ, դա եւս թատերական բեմականացումների շարքից է: Բնականաբար, ԵՄ-ն ամեն տեսակի ջանք գործադրում է, որ Փաշինյանի իշխանությունը վերարտադրվի: Տասնամյակների ջանքերով կարողացել են վերջապես օտարամետ ուժին իշխանության բերել: Արեւմուտքի կողմից սնած, թուրքական ձեռքերով ծնած թուրքական ծրագրին հլու-հնազանդ մարդիկ եկել են իշխանության, ուստի չեմ կարծում, թե հայկական կողմն ինչ-որ հարցում խնդրել է իրենց: Ոչ, սա պարզապես զուտ իրենց քայլերի տրամաբանության շարունակությունն է: Փաշինյանն ունի վերարտադրվելու խնդիր, այս ամենին գումարած՝ երկիրը տնտեսապես կախված է ԵԱՏՄ շուկայից եւ դրա կողմից ընձեռվող հնարավորություններից: Քանի որ Փաշինյանի իշխանության հարցերը վերջնականապես լուծված չեն, բնականաբար, նա կտրուկ քայլեր չի անելու ո՛չ ԵԱՏՄ-ի, ո՛չ էլ ԱՊՀ-ի հետ: Եթե Փաշինյանն այս պահին գնաց կտրուկ քայլերի, դա հաստատապես իր համար լավ չի լինի, այդ պատճառով էլ նա չի անի նման քայլ: Այլ խնդիր է, որ եթե, Աստված մի արասցե, նրա իշխանությունը ԵՄ-ի օգնությամբ վերարտադրվի, մենք ականատեսն ենք լինելու մեր պետության վերացման: Այդ ժամանակ արդեն «չորրորդ հանրապետությունը» կստեղծվի՝ իր սահմանադրությամբ, իսկ մենք գիտենք, որ այն հպատակեցման, թրքացման ծրագրի կանաչ լույսն է: Այս իշխանությունը մինչեւ ընտրություն չի գնալու կտրուկ քայլերի: Նա փորձում է ՆԱՏՕ-ի հետ եւս հարաբերությունները կարգավորել: ՆԱՏՕ-ն, ԵՄ-ն չաղացնում են Հայաստանը, որպեսզի մորթեն՝ հակառուսական, հակաիրանական ծրագրերն իրականացնելու համար:

- Տեսակետներ կան, որ այժմ ԵՄ-ն սկսել է անջատվել ԱՄՆ-ից եւ հայտնվել է ճգնաժամային վիճակում: Անգամ կան տեսակետներ, որ շուտով Թրամփը հրաժարվելու է ուկրաինական հարցից՝ այն թողնելով ԵՄ-ի վրա....

- Համակարծիք չեմ այդ ամենին: Դերերի բաշխումով իրականացվող խաղ է: Թրամփին անհրաժեշտ է ժամանակավոր դադար, որպեսզի ԱՄՆ-ն ոտքի կանգնեցնի: Սրանք իրականում խաղեր են Թրամփի կողմից, որպեսզի ռուսական կողմի հետ համաձայնության գնա որոշակի հարցերում: Այն, որ Եվրոպական Միությունը, որպես կառույց, ոչ մի հեղինակություն չունի թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական ասպեկտներում, դա անհերքելի փաստ է: Ես դեռ երեք տարի առաջ էի ասում, որ պատկերն այդպիսին է լինելու: Այսօր անգամ ԵՄ պաշտոնյաների բերանով է այդ ամենը հնչում:

ԱՐԴԱՐԱՑՈՒՄ

ՑԱՆԿԱՑԱԾ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԼՈՒԾՈՒՄ ԳԱԼԻՍ, ԴԵՄ Է ԱՌՆՈՒՄ ՆՈՒՅՆ ԽՈՉԸՆԴՈՏԻՆ՝ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

«Ունենք լավ նախագծեր ունենք, արդեն խոսել ենք էներգետիկայի մասին, այդ թվում՝ ատոմային, հիմա մանրամասներին չենք անդրադառնա, բայց կան հնարավորություններ՝ խոսելու, քննարկելու»,- Սանկտ Պետերբուրգում կայացած Փաշինյան-Պուտին հանդիպման հրապարակային մասում հայտարարել է Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը: ՌԴ նախագահի խոսքից երեւում է, որ քննարկումը վերաբերել է Հայաստանում նոր ատոմակայան կառուցելու խնդրին, բայց որեւէ որոշման կողմերը չեն հանգել: Փաշինյանն իր պատասխան խոսքում էներգետիկայի ոլորտում քննարկումներին ընդհանրապես չի անդրադառնում, նա ասելու բան չունի: Նոր ատոմակայանի կառուցման հարցը Հայաստանի համար ունի ռազմավարական նշանակություն, երկրի էներգետիկ պահանջները տարեցտարի ավելանում են, իսկ նոր հզորություններ չեն գործարկվում, եթե նկատի չունենանք արեւային կայանները, որոնք չնայած համարվում են էներգիայի էկոլոգիապես ավելի անվտանգ եւ անսպառ, սակայն ոչ կայուն եւ հուսալի աղբյուր: Հայաստանը չափազանց ծանր վիճակում է, որովհետեւ գտնվում է երկու քարի արանքում՝ թուրք-ամերիկյան, որը հնարավորություն չի տալիս Հայաստանին ինքնուրույն որոշումներ կայացնել: Նման իրավիճակի հիմնական պատասխանատուն Հայաստանի իշխանությունների քաղաքականությունն է, ինքնուրույն որոշումներ կայացնելու պատասխանատվությունից անընդունակությունը եւ օտարի քմահաճույքներին, պարտադրանքին հակադրվելու անկարողությունը: Ռուսաստանի իշխանությունը Հայաստանին ստեղծված իրավիճակից դուրս գալու հնարավորություն է տալիս, օգնության ձեռք է մեկնում:

Հայաստանի էներգահամակարգի ամենակայուն եւ հուսալի մատակարարման աղբյուրը մնում է Հայկական ատոմային էլեկտրակայանը, որն արդեն 45 տարուց ավելի անվտանգ շահագործվում է՝ ապահովելով ներկայիս Հայաստանի էլեկտրաէներգիայի պահանջարկի 35-40 տոկոսը: Հայաստանի ատոմային էլեկտրակայանի շահագործումը երկարաձգվել է մինչեւ 2026 թվականը, բայց դա այն առավելագույնն է, ինչ հնարավոր է անել: Եթե Հայաստանի ատոմակայանը կանգնի, Հայաստանում էներգետիկ ճգնաժամն անխուսափելի կլինի, ինչը հնարավոր չի լինի լուծել ոչ մեկ, ոչ էլ անգամ հինգ տարում: Հիմա պետք է քայլ կատարվի, որոշում կայացվի, եւ սկսվի նոր ատոմակայանի կառուցումը, որը կարող է տեւել 10 տարուց ավելի: Բայց Հայաստանի իշխանությունը, բացի խոզի բույն կառուցելուց, ուրիշ որեւէ բան կառուցելու հնարավորություն եւ իրավասություն չունի. առավելագույնը, որ կարող է անել Փաշինյանը, ատոմակայան գնացող ճանապարհի ասֆալտապատումն է եւ մայթերին եզրաքարեր շարելը:

Թուրքիան եւ Ադրբեջանն ընդհանրապես դեմ են Հայաստանում ատոմակայանի գոյությանը, նրանք տասնամյակներ շարունակ պահանջում են, որ Հայաստանը դադարեցնի գործող ատոմակայանի շահագործումը, ուր մնաց, որ Հայաստանին թույլ տան՝ նոր ատոմակայան կառուցել: Նրանց մոտիվացիան պարզ է. ատոմակայան ունեցող-շահագործող Հայաստանը համարյա ատոմային տերություն է, էներգետիկ անկախություն ունեցող, տնտեսությանն էժան եւ կայուն էներգիա մատակարարող: Եթե նկատի ունենանք, որ տրանսպորտը եւս արագ տեմպերով էլեկտրիֆիկացվում է, գազի, նավթի ու դիզվառելիքի գործոնը զգալիորեն թուլանում է, ապա պարզ է, թե որքանով իրենց ձեռք չի տալիս ատոմակայան ունեցող Հայաստանը: Ատոմակայան չունեցող Հայաստանը մնալու է իրենցից կախված, ոչ մրցունակ, թերզարգացած, մնացորդային մի բան: Ատոմակայանը Հայաստանի տնտեսության լոկոմոտիվն է, եթե այն իր հետեւից քաշի, ամբողջ երկիրն առաջ կգնա, չքաշի, կանգնելու է տեղում: Ատոմակայանի կառուցմանը փաստացի դեմ են նաեւ ամերիկացիները, համենայնդեպս, նախորդի՝ Ջո Բայդենի վարչակազմը, որը կարծում էր, որ ռուսական տեխնոլոգիայով, ռուսների աջակցությամբ կառուցվող եւ շահագործվող ատոմակայանը Հայաստանը գցելու է Ռուսաստանից կախվածության մեջ, այդ թվում՝ եւ էներգետիկ: Ամերիկացիները Հայաստանին առաջարկում էին մոդուլային՝ փոքր հզորության ատոմակայաններ, որն իբրեւ թե չեզոքացնելու էր նաեւ Թուրքիայի անհանգստությունը ատոմակայանից բխող ռիսկերի առումով: Սակայն նախ ամերիկացիները մոդուլային ատոմակայանի նախագիծ չունեն, որեւէ երկրում, այդ թվում եւ իրենց, չեն կառուցել, չեն շահագործել որեւէ մոդուլային ատոմակայան, բացի դա էլ, ամերիկյան նախագծերը՝ մեծ ատոմակայանների համար, չափազանց թանկ են, Հայաստանի ֆինանսական հնարավորություններին ոչ համարժեք:

Փաշինյանը ժամանակ ձգելու համար անցած տարվա օգոստոսի 1-ին կառավարության որոշում կայացրեց «Ատոմային նոր էներգաբլոկի կառուցում» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին, որը երկու տարվա ընթացքում պետք է որոշեր, թե որ նախագծին նախապատվությունը տալ, որ երկրի հետ նոր ատոմակայան կառուցել: Բայց նոր ատոմակայան կառուցելու հարցը քաղաքական եւ ոչ այնքան տեխնիկական հարց է, դա պետք է որոշի կառավարությունը, իշխանության ղեկավարը եւ ոչ թե ինչ-որ ընկերություն: Բայց նույնիսկ այդ ընկերության գործունեության ժամկետը սպառվում է, արդեն մի քանի ամիս հետո այդ ընկերությունը պետք է որոշում կայացնի, չնայած այդ ժամանակ արդեն Փաշինյանն էլ իշխանության չի լինի:

Ռուսաստանը եւ Վլադիմիր Պուտինը Հայաստանին այլընտրանք են առաջարկում, առաջարկում են իրենց օգնությամբ նոր ատոմակայան կառուցել եւ դրա մասին մի անգամ չէ, որ հայտարարել են: Ռուսաստանի հետ նոր ատոմակայան կառուցելու առավելությունն այն է, որ այդ դեպքում չեզոքացվում է Թուրքիայի եւ Ադրբեջանի դիմադրությունը, դեմ դուրս գալով Հայաստանում նոր ատոմակայանի կառուցմանը, նրանք փաստացի հանդես են գալու Ռուսաստանի դեմ, ինչը չեն անի կամ եթե անեն էլ, արդյունք չի տա: Ռուսաստանը, ի տարբերություն ԱՄՆ-ի, ոչ միայն ատոմային տեխնոլոգիաներ ունի, այլեւ ատոմային վառելիքի մատակարար է, այդ թվում եւ Միացյալ Նահանգներ, այդ երկիրն իր ատոմային վառելիքի մի զգալի մասը ներմուծում է Ռուսաստանից: Ռուսաստանը մարդատար մեքենա չի կարողանում արտադրել, բայց ունի ինչպես հզոր ատոմային ռեակտորներ, այնպես էլ մոդուլային ռեակտորների կառուցման եւ շահագործման փորձ, այդ պահին Ուզբեկստանում «Ռոսատոմը» կառուցում է վեց մոդուլային ատոմակայան, մի երկրում, որտեղ երբեք ատոմակայան չի եղել: Աշխարհում կառուցվող եւ շահագործվող ռուսական էներգաբլոկների մասին էլ չենք խոսում:

Թեեւ Նիկոլ Փաշինյանը Ռուսաստանում քննարկել է այդ երկրի օգնությամբ նոր ատոմակայան կառուցելու հարցը, բայց նա երբեք որոշում չի կայացնի, նա այդ նույն ձեւով Ֆրանսիայում կարող է քննարկել Ֆրանսիայի օգնությամբ ատոմակայան կառուցելու հարցը, ամերիկյան այցի ժամանակ քննարկել ամերիկյան ընկերությունների հետ համատեղ ատոմակայան կառուցելու հարցը, իսկ Թուրքիա այցի ժամանակ վստահեցնել, որ Հայաստանում ոչ մի ատոմակայան էլ չի կառուցվելու: Եվ, ի վերջո, կատարելու է հենց այդ խոստումը, որովհետեւ նա ուղղակի ընդունակ չէ որոշում կայացնելու, նա կարող է քանդել, բայց ոչ կառուցել: Իսկ հապաղելու ժամանակ, ինչպես հասկանում եք, չկա, ամեն մի կորսված ամիսը կամ առավել եւս տարին, մեզ ավելի է մոտեցնում վերահաս էներգետիկ ճգնաժամին եւ քաոսին: Մարդիկ ասում են՝ հերիք է Փաշինյանին քննարկեք, երկրի առաջ հազար ու մի ավելի կարեւոր հարցեր կան, բայց ցանկացած հարցի քննարկում եւ լուծում գալիս եւ դեմ է առնում նույն խոչընդոտին՝ Նիկոլ Փաշինյանին, առանց որի հաղթահարման մնացածն անհնար է դառնում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՁԵՐ ԶՈՀՎԱԾ ՈՐԴԻՆԵՐԻ ԱՐՅՈՒՆՆ ԵՔ ՓՈԽԱՆԱԿԵԼ ԷԺԱՆ ԲԵՆԶԻՆԻ ՀԵՏ

Ադրբեջանական բենզինի մատակարարումների հարցը կամ Ադրբեջանի հետ ցանկացած առեւտրատնտեսական «քայլ» տվյալ փուլում որեւէ կապ չունի խաղաղության, երկու երկրների միջեւ տնտեսական հարաբերությունների վերականգնման կամ որեւէ այլ դրական գործընթացի հետ:

Թուրք-ադրբեջանական տանդեմը սրանով լուծում է երկու խնդիր: Առաջինը՝ շտապում է օգնության ներկայիս հայկական իշխանություններին՝ մարդկանց մեջ ձեւավորելով խաղաղության կեղծ պատրանք, քանզի շատ լավ հասկանում է, որ կառավարող ուժը խայտառակ անկում է ապրել եւ կորցրել իր հեղինակությունը հայ հասարակության աչքում: Ըստ էության, թուրքերի եւ ադրբեջանցիների քայլերը հասկանալու համար խորհուրդ կտամ դիտել հանրահայտ «Փրկել շարքային Ռայանին» հոլիվուդյան հայտնի ֆիլմը:

Երկրորդը. հերթական նվաստացման ակտով թուրք-ադրբեջանական տանդեմը նաեւ «կոտրում» է հայկական հասարակությանը՝ փաստացի ասելով. «Դուք ձեր զոհված որդիների արյունը փոխանակել եք էժան բենզինի հետ: Դուք Պատվով եւ Արժանապատվությամբ մարդիկ չեք» (սա է մեզ ասում Ադրբեջանը): «Դուք ժողովուրդ կամ ազգ չեք, այլ պարզապես «անկապ» բիոզանգված եք, որոնք միանգամայն անտարբեր են սեփական Հայրենիքի ու Պետության նկատմամբ»:

Կոպիտ է հնչում, բայց իրականում ամեն ինչ հենց այսպես է երեւում: Ուստի պարզապես ընդունեք, որ ցանկացած մարդ, ով գիտակցաբար տվյալ իրավիճակում օգտվում է ադրբեջանական «բարիքներից», ըստ էության, հաստատում է ադրբեջանական այս բոլոր նարատիվները:

Այսպիսով, եւս մեկ անգամ. յուրաքանչյուր մարդ պետք է գիտակցի, որ իր մեքենայի բենզախցիկը լցնում է ոչ թե «էժան ադրբեջանական բենզին», այլ մեր զոհված զինվորների, կանանց, տարեցների եւ երեխաների արյունը:

Եվ այո՛... մենք անասուն չենք, որքան էլ ոմանք ցանկանան մեզ այդպիսին դարձնել:

Արման ԱԲՈՎՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ ԽՈՒՄՈՏԸ

ԵՐԲ ԲՈՂՈՔՈՒՄ ԵՍ, ԱՍՈՒՄ ԵՆ՝ ՀԵՍԱ ԿԿԱՅՆԵՄ, ԿԻՋՆԵՍ

Աշտարակից Երեւան ուղեւորափոխադրումներն իրականացնում է միակ՝ 502 համարի երթուղայինը: Սա հանրապետության ամենածանրաբեռնված տրանսպորտային գծերից է, որը ոչ մի կերպ չի բարելավվում:

Ամռանը գծի սպասարկման տենդերը շահել էր «Մուլտի տրանսպորտ» ընկերությունը: Մարդիկ սպասում էին, որ երթուղայինները կավելացնեն, որ գոնե նստած վիճակում տեղ հասնելու շանս ունենան: Պարզվեց՝ իզուր: Ուղեւորները կրկին չեն կարողանում տեղ գտնել 502 երթուղին սպասարկող միկրոավտոբուսներում: «Երբ որ տենդերը նոր էին իրենք շահել, ինչ-որ շրջան վարորդներ չունեին, ու մենք տաքսով էինք ամեն օր Երեւանից Աշտարակ ու Աշտարակից Երեւան հասնում:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Նախկինում ավտոբուսներ էին գնում, հարմար չէր, սակայն մի կերպ հարմարվում էինք, բայց սա արդեն խայտառակություն է: 16 ուղեւոր է տանում՝ նստատեղերով, բայց վարորդները 36 հոգի են լցնում: Շատ վտանգավոր է: Մի օր այնպիսի վթար է լինելու, որ ոչ ոք տակից դուրս չի գա»,- ասում է թիվ 502 երթուղու մշտական ուղեւորներից Աշտարակի բնակիչ **Աննա Սարգսյանը**: Նրա որդին 44-օրյա պատերազմի մասնակից է, ունի հաշմանդամություն, դեռ բուժումներ է ստանում: Աննան սարսափը սրտում սպասում է, թե երբ է որդին վերջնականապես ապաքինված աշխատանքի դուրս գալու: «Ո՞նց է տղաս գնալու-գալու, եթե անգամ առողջ մարդու համար 502 համարից օգտվելը հավասարազոր է խոշտանգման»: «Տենդերը Ծառուկյանի ընկերությունը շահեց, ոչ մեկին չթողեց, որ մասնակցեն, շահեց՝ լավ արեց, բայց չի թողնում, որ անգամ ավտոբուսը մինուսով գնա: Առավոտյան այնքան է լցնում, որ հետադարձը հանկարծ մինուսով չքշի: Մուղնիից որ հասնում է Աշտարակի հրապարակ, արդեն լիքն է լինում: Արա թաղամասով, ավտոկայանով, ամեն տեղ ուղեւոր վերցնելով, հասնում է Երեւան: Հաճախ ուշաթափություններ են լինում»,- պատմում է Աննան:

502 համարի միկրոավտոբուսն օրերս փչացել էր, եւ փոխանակ նոր, ազատ մեքենա կանչեն, փչացած ավտոբուսի ուղեւորներին խցկել են մեկ այլ ծանրաբեռնված միկրոավտոբուսի մեջ: «Իրար վրա են պառկացրել ու ուղարկել: Քանի որ նա մեր գումարներն արդեն ստացել էր, բոլորիս լցրեց էդ մյուս ավտոբուսը: Վարորդները՝ բոլորը, սեւավոր, «բեյջեր» չունեն, ոնց որ բոլորը քերոբներ լինեն: Կինոյի տակ են մնացել, ինչ, մարդկանց հետ իրենց բռի լեքսիկոնով են խոսում: Եթե բողոքում ես, ասում են՝ հեսա կկայնեմ, կիջնես: Նա իրավունք չունի ոչ մեկին իջեցնելու»,- ասում է Աննա Սարգսյանը:

Աշտարակցիները բազմիցս բողոքել են տարբեր ատյաններ, բայց ատյանները մեկը մյուսի վրա են գցել: «Զանգում ես քաղաքապետարան, ասում են՝ մեր գործը չի, զանգում ես թեժ գիծ, ասում են՝ դա մեր գործը չի: Լավ, ես չեմ հասկանում՝ չի՞ կարելի մի հատ ռեյս ավելացնել, մի ռեյսն էլ թող վնասով գնա գա: Չի կարելի մարդկանց անվտանգության հաշվին փող աշխատել: Արդեն հասել ենք այն աստիճանի, որ պատրաստվում ենք փակել Աշտարակ-Երեւան մայրուղին, որ գոնե այս ձեւով Նիկոլ Փաշինյանի ուշադրությունը գրավենք»:

Մենք զանգահարեցինք ՏԿԵ նախարարություն, վերաշարադրեցինք քաղաքացու բողոքը, բայց պատասխան չստացանք: Զանգահարեցինք թեժ գիծ: Քիչ անց մեզ հետ կապ հաստատեց «Մուլտի տրանսպորտ» ընկերության գլխավոր տնօրեն **Արթուր Դալլաքյանը**:

Նա նախ հարցրեց, թե արդյոք ծանո՞թ ենք «Աշտարակի կողմի ժողովրդին»: «Ես համոզվեցի, որ այդտեղ եթե անգամ ոսկուց ավտոբուս էլ տեղադրենք, միեւնույն է, դժգոհ է էդ կողմի ժողովուրդը: Նրանք սուտ են խոսում: Տվյալ ավտոբուսի մեջ անհնար է 24-րդ մարդուն տեղավորել»,- ասաց նա:

«Մուլտի տրանսպորտ»-ի տնօրենի հետ խոսելիս մեզ թվաց, թե 502-րդ երթուղին աշխարհում ամենահարմարավետ, «գոլդ» դասի երթուղին է, որից անգամ զարգացած երկրներում չես գտնի: Ըստ տնօրենի, Աշտարակ-Երեւան միկրոավտոբուսները մետրոյից արագ են աշխատում՝ 4-5 րոպեն մեկ: Այս պահին էլ աշխատում է 20 միկրոավտոբուս, իսկ ամռանը՝ «դաժե 26»: «Առավոտյան 8-ից ժամը 9-ն է խնդիրը: Ցերեկը երեք հոգի որ գնաց, հինգ հոգի եկավ, ոչ ոք դրա մասին չի խոսում: Աշխարհով մեկ առավոտյան ժամերը ծանրաբեռնված են: Սա անլուծելի խնդիր է: Ուզենաս էլ փոխադրումը շատ արագացնես, չես կարող, որովհետեւ ժամային գրաֆիկը հաստատված է կառավարության ու նախարարության կողմից: 17 տեղանի միկրոավտոբուս է, մաքսիմում՝ 6-7 մարդ կարող է մեջը կանգնել: Ուզենաս էլ, դրանից ավել մարդ տեղավորել չես կարա: Բնական ծավալ գոյություն ունի»:

Արթուր Դալլաքյանն ասում է, որ ինքն առաջիններից է հասկացել տրանսպորտի բարելավման կարեւորությունը, բայց հիմա եկել է համոզման, որ ուղեւորին բացատրելն անշնորհակալ գործ է: «Ես կարող էի չզանգել Ձեզ: Ես կարող եմ ոչ մեկին էլ բացատրություն չտալ: Բնական չի՞, որ կուզեինք մեքենա ավելացնել, ընկերությանը ձեռք կտար, բայց նստողը քիչ է»,- ասաց նա:

ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ԱԶԱՏՎՈՒՄ Է ՍԱՀԱԿԱՇՎԻԼՈՒ «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ»

Վրաստանի իշխող կուսակցությունը՝ «Վրացական երազանքը», հետեւողականորեն ազատվում է Միխայիլ Սահակաշվիլու «մռայլ ժամանակների ժառանգությունից»: Մասնավորապես, ինչպես գրում է քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը, դեկտեմբերի 17-ին վրացական խորհրդարանը երրորդ՝ վերջնական ընթերցմամբ հաստատել է այն օրենքը, որով առոչինչ են ճանաչվում բոլոր այն իրավական փաստաթղթերը, որոնք ստեղծվել են Սահակաշվիլու կառավարման ժամանակ եւ վերաբերում են, այսպես կոչված, Հարավային Օսիայի ժամանակավոր վարչակազմին:

Նոր օրենքին կողմ է քվեարկել 83 պատգամավոր:

Համաձայն վրացական օրենսդրության, օրենքը դրվելու է նախագահ Միխայիլ Կավելաշվիլու սեղանին՝ ստորագրվելու համար: Նախագահի ստորագրելը, մեծ հաշվով, ֆորմալ գործողություն է, քանի որ, վրացական օրենսդրությամբ՝ նախագահը լիազորությունների առումով մոտավորապես նույնն է, ինչ բրիտանական միապետը:

Այսպիսով, 26 թվական մուտք գործելուն պես՝ Սահակաշվիլու կողմից ստեղծված կառույցը կլուծարվի, իսկ կառույցի աշխատակիցները կազատվեն աշխատանքից՝ ստանալով իրենց հաստիքին համարժեք վճարման եռամսյա գումարին համարժեք նպաստ՝ միանվագ կերպով: Ինչ է այդ օրենքը նշանակում:

Այս հարցին պատասխանելու համար պետք է հիշել, որ Սահակաշվիլին վարում էր Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հակամարտությունները «ապասառեցնելու» ակտիվ քաղաքականություն: Երկու դեպքում էլ Սահակաշվիլին եւ նրա վարչակարգի անդամները փորձում էին փոփոխել խաղաղ կարգավորման շրջանակները՝ ընդլայնելով բանակցային գործընթացին մասնակիցների ցանկը:

Սահակաշվիլու տեսակետն այն էր, որ պետք է խաղաղ կարգավորմանը մասնակցեին այն աբխազներն ու օսերը, ովքեր Սահակաշվիլու համար համարվում էին «յուրային»:

Այդ ժամանակներից շատ ջրեր են հոսել, ինչպես ասում են:

Ու, մեծ հաշվով, հույսերն ի դերեւ են ելել, որ երկու հակամարտություններն էլ կարելի է «ապասառեցնել» ԱՄՆ եւ ՆԱՏՕ-ի օգնությամբ: Ռուսաստանը ճանաչել է Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը:

Դա, իհարկե, Թբիլիսիի կեցվածքում փոփոխություն չի կատարել:

Ու այսօր էլ Վրաստանի համար տարածքային ամբողջականության ճանաչումը «հատման ոչ ենթակա կարմիր գիծ» է: Սակայն այս օրենքը փաստացի արձանագրում է վրացական գործող վարչակազմի ավելի սթափ ու իրատեսական մոտեցումը, ըստ որի՝ անիմաստ է անհավասար ուժերի պայմաններում հակամարտությունն «ապասառեցնել»:

Սահակաշվիլին Վրաստանում գործող իշխանության կողմից դեմոնիզացված է, եւ նրան մեղադրում են թերեւս բոլոր «մահացու մեղքերում»՝ սկսած դավաճանական քաղաքականություն վարելուց: Ու պատահական չէ, որ այս ամենի հանրագումարում՝ փորձում են ազատվել այն «ժառանգությունից», որը թողել է Սահակաշվիլին:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարզպետն իր ենթակա դպրոցների աշխատողների թիվը չգիտի

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք արել. «Դեկտեմբերի 16-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում քանի՞ աշխատող, քանի՞ աշակերտ կա»:

Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում աշխատողների հաշվառում չի իրականացվում, սովորող աշակերտների թիվը 15 հազար 468 է»: Գործատուն՝ մարզպետի աշխատակազմը, որն աշխատավարձ է վճարում ուսուցիչներին, իր ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում աշխատողների հաշվառում, փաստորեն, չի իրականացնում եւ չգիտի, թե Տավուշի մարզի դպրոցներում ընդհանուր քանի աշխատող կա: Հիշեցնենք, որ նման անփույթ աշխատանք կատարող Տավուշի մարզպետի աշխատակազմը 2025 թվականին աղքատ Հայաստանի պետբյուջեից շուրջ 67 միլիոն դրամ պարգեւավճար է ստացել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«Սիթիին» տվեց անցավ. «88»-ը կրկնակի թանկացրել է տոպրակների գները

«88» սուպերմարկետը տոներից առաջ կտրուկ թանկացրել է պոլիէթիլենային տոպրակների գինը: Եթե նախկինում դրանք 30 դրամ էին, ապա այժմ միանգամից կրկնակի թանկացել են: Այս մասին տեղեկացանք Շիրակի փողոցում գտնվող «88»-ի աշխատակիցներից: Նրանք չկարողացան բացատրել, թե ինչու է խանութը հանկարծ որոշել գերշահույթ ստանալ հասարակ ցելոֆանի հաշվին: Նախկինում այս սուպերմարկետի տեղում «Սան ֆուդ»-ն էր, որի ղեկավարությունը կոշտ հարկային ստուգումից հետո որոշեց փակել այն: Բնակիչները գոհ են սպասարկման մակարդակից, սակայն դժգոհ են ապրանքների բարձր գներից եւ որակից: Մարի Ա.-ն «Հրապարակին» հայտնեց, որ նախկինում այստեղից ամանորյա մսաբլիթների խմոր է գնել: «10 հատն արժեր 400 դրամ, հիմա 10 հատն արժի 800 դրամ, բայց որակը սարսափելի է: Գնեցի թանկ-թանկ, տարա տուն, փաթաթեցի, միանգամից կոտրվեցին»,- ասում է գնորդը, որը տարածքի բնակիչ է: Ի դեպ, պիտակի վրա արտադրողի կոորդինատները ներկայացված չեն, իսկ խանութին բողոքելիս ստանում ես պատասխան՝ մեղավորն արտադրողն է, ոչ թե մենք:

«Իրազեկ եւ պաշտպանված սպառող» ՀԿ նախագահ **Բաբկեն Պիպոյանին** հարցրինք, թե ինչով է պայմանավորված պոլիէթիլենե տոպրակների գների կրկնակի ավելացումը, ինչն է փոխվել, որ թանկացրել են: ««88» սուպերմարկետը, փաստորեն, ռեկորդ է սահմանել: «Սիթիի» գներից անցան: 50 դրամ «Սիթի»-ում էր: Ոչ մի բանով պայմանավորված չէ: Ըստ էության, պետությունը, անունը դնելով բարեփոխում, պոլիէթիլենային տոպրակների անվճար տրամադրումն արգելեց, որպեսզի մշակվեր մի ընթացակարգ, որ քաղաքացիները հրաժարվեին դրանցից, անցնեին այլընտրանքային ձեւերին: Չաշխատեց, որովհետեւ զարգացած չէր ենթակառուցվածքը, չկային այլընտրանքներ, արդյունքում բիզնեսի համար լրացուցիչ շահույթի հնարավորություն առաջացավ: Կարող է սահմանել 30, 50, 60, 100: Հսկողություն որեւէ մեկը չի կարող սահմանել, որովհետեւ նույն բիզնեսը կպտտվի, կասի՝ դուք չէիք ասում՝ ձրի չտաք, թանկ դրեք էդ տոպրակը: Եվ հերթական անգամ տուժեց սպառողը»:

Ըստ Պիպոյանի, սա նաեւ այն իրավիճակի հետեւանքն է, երբ կառավարության նիստում են հրահանգներ հնչում, թե որ բիզնեսը կարող է աշխատել, որը՝ ոչ: «88» սուպերմարկետը պատկանում է իշխանության բարեհաճությունը վայելող գործարար Նարեկ Նալբանդյանին: Խանութների այս ցանցի անունը կապում են նաեւ վարչապետի կնոջ հետ, որը պարբերաբար հերքում է այդ լուրերը՝ պնդելով, թե որեւէ առնչություն չունի այս ցանցի հետ, բայց ոչ ոք առանձնապես դրան չի հավատում:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԻՐԱՆՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԽԱԽՏԵԼ ԵՆ

ՏՈՐՈՎԻՄ

Սահմանազատման անվան տակ, միակողմանի, ապօրինի կերպով Կիրանցի կամուրջը, միջպետական ավտոճանապարհի մի հատվածը, Կիրանց գյուղի շուրջ 15 հեկտար հողերը եւ Բերքաբեր գյուղի սահմանային գոտում գտնվող ու Կիրանց-Բաղանիս հատվածում 30 տարի ամրացված դիրքերը 2024 թվականին ՀՀ իշխանությունն Ադրբեջանին հանձնելուց հետո հանրության ուշադրությունը շեղելու համար 2025 թվականին սկսեց Ոսկեպար գյուղի Սուրբ Աստվածածին եւ Կիրանցի Սուրբ Երրորդություն եկեղեցիները վերանորոգել:

2025թ. սեպտեմբերի 6-ին ԿԳՄՍ նախարարության Պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության եւ «Պատմամշակութային արգելոց-թանգարաններ եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներն աշխատանքային այց են կատարել Կիրանց գյուղի Սբ Երրորդություն եկեղեցի: ԿԳՄՍ նախարարության հաղորդմամբ, հանդիպմանը մասնակցել են կապալառու, որակի տեխնիկական ու հեղինակային հսկողություններն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները: Իսկ տեղում իրականացվում էին շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքներ, ԿԳՄՍ նախարարության հետ ավելի վաղ չհամաձայնեցված վերականգնողական աշխատանքների ընթացքում հուշարձանի տեսքն աղավաղած կարանախցումների ապամոնտաժում: Այդ հանդիպմանը համաձայնեցվել է վերականգնվող եկեղեցու քարի գույնը, ցուցումներ են տրվել աշխատանքների իրականացման մեթոդաբանության վերաբերյալ՝ պատերի արտաքին եւ ներքին մակերեւույթների կարանախցման եւ դրանց տարբերության, ռոտոնդայի իրականացման եւ այլնի մասին: ԿԳՄՍ նախարարության հաղորդմամբ՝ եկեղեցու վերականգնման եւ տարածքի բարեկարգման աշխատանքները նախատեսվում էր ավարտել մինչեւ այս տարեվերջ:

Նիկոլ Փաշինյանը դեկտեմբերի 6-ին քաղաքացիների մոտ 50 հոգանոց խմբի հետ այցելել է Կիրանց բնակավայր: Այդ մասին պաշտոնական հաղորդագրության մեջ նշված է, որ եկեղեցու վերականգնման աշխատանքների համար պետբյուջեից հատկացվել է 55 միլիոն դրամ, վերականգնման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում: Մինչդեռ ԿԳՄՍ նախարարությունը նախկինում հայտնել է, որ նախարարությանը 2024 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին կատարել է ֆինանսների վերաբաշխում՝ 66 միլիոն 127 հազար դրամ գումարի չափով, գումարն ուղղվել է Կիրանց գյուղի Սուրբ Երրորդություն եկեղեցու վերականգնման աշխատանքների ձեռքբերմանը: Պաշտոնապես հայտնել են Սուրբ Երրորդություն եկեղեցու վերականգնման համար 55 միլիոն դրամի եւ 66 միլիոն դրամի հատկացման մասին: Հիմա այդ թվերից ո՞րն է ճիշտ: ԿԳՄՍ նախարարությունը հայտնել է նաեւ, որ Կիրանցի Սուրբ Երրորդություն եկեղեցու վերականգնումը կավարտվի մինչեւ 2025 թվականի վերջը:

Դեկտեմբերի 6-ին քաղաքացիների 50 հոգանոց խմբին Կիրանց էքսկուրսիա տարած Նիկոլ Փաշինյանը ծանոթացրել է եկեղեցու վերականգնման աշխատանքներին: Իր ֆեյսբուքյան էջում տեղադրված տեսանյութում Փաշինյանը հայտարարում է, որ գարնանը աշխատանքներն ավարտված կլինեն: Բառացիորեն ասել է. «Գարնանը, Սուրբ Զատիկի առիթով երեւի արդեն պատրաստ կլինի»: Կիրանց գյուղից տեղեկացա, որ եկեղեցու վերականգնման աշխատանքները կատարող շինարարական կազմակերպության մի քանի բանվոր է աշխատում այս պահին: Իսկ եկեղեցու գմբեթում, կամարներում իրականացվող եւ եկեղեցու ներսում ներքին հարդարման աշխատանքները կիսատ են մնացել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՄԵՆ ԲԱՆ ՆՈՐԻՑ ՍԿՍԵԼՈՒ ՄԻՋՈՑ»

Դեկտեմբերի 18-ին էկրան բարձրացավ նոր ֆանտաստիկ մելոդրամա՝ «Հավերժություն» վերնագրով: Ֆիլմը պատմում է այն կնոջ մասին, որը հայտնվում է անդրշիրիմյան աշխարհում՝ իր առաջին ու երկրորդ ամուսինների հետ, եւ պետք է կողմնորոշվի, թե ում հետ է շարունակելու անցկացնել հավերժությունը: Ամերիկյան իրականության համար, ըստ կինոքննադատների, սա ոչ տիպիկ փիլիսոփայական կինոնկար է: Այն պատմում է կյանքի ընտրությունների, նախկին սիրեցյալների իդեալականացման եւ ներկա սիրեցյալներին գնահատել չկարողանալու ու այն բանի մասին, թե ինչպես կարող էինք վարվել, եթե ամեն բան նորից սկսելու հնարավորություն տրվեր մեզ:

Պատահական չէ, որ կինոնկարի արտադրությամբ զբաղվել է Նյու Յորքի Ա 24 ստուդիան, որը դարձել է կուլտային՝ աշխարհում հեղինակային կինոյի արտադրության ոլորտում: Հենց այս ստուդիան է, որ փառք է բերել Արի Աստերին, Գրետա Գերվիգին, Ռոբերտ Էգերսին, Դենիել Քվանային, Դենիել Շայներթին, Սելին Սոնին ու շատ այլոց, ովքեր իրենց խոսքն ունեն ամերիկյան անկախ կինոարվեստում եւ ստեղծել են ամբողջ աշխարհում իրենց երկրպագուների բազմամիլիոնանոց բանակ: Կինոնկարի ռեժիսորը Դեւիդ Ֆրեյնն է: Ֆիլմի կարգախոսն է՝ «Ընտրիր ողջ կյանքիդ սիրուն», ինչը թերեւս այնքան էլ ճիշտ չէ, քանի որ ֆիլմի առաջին 15 րոպեներում բոլոր հերոսները, որոնց ճակատագրերին հետեւելու ենք ողջ ֆիլմի ընթացքում, պարզապես մահանում են:

Սյուժեի համաձայն, Լարի եւ Զոան ամուսինները, որոնց կերպարները մարմնավորել են Մայլզ Թելերն ու Էլիզաբեթ Օլսենը, 65 տարվա համատեղ ամուսնական կյանքից հետո, տեսնելով իրենց զավակներին, թոռներին ու ծոռներին, մեկ շաբաթվա տարբերությամբ մեռնում են ու հայտնվում քավարանում՝ ժամանակավոր մի կայանատեղիում, որը հիշեցնում է հարմարավետ հյուրանոց, որտեղ յուրաքանչյուրն ընտրելու է, թե հավերժության «մնացյալ մասը» որտեղ է ցանկանում անցկացնել: Կա «դրախտի» մի քանի տարբերակ՝ ծովային առողջարան, լեռնային գեղատեսիլ գյուղ, վայր, որտեղ չկան տղամարդիկ ու 1960-ականների Փարիզ: Յոթ օրվա ընթացքում էլ յուրաքանչյուրն ըստ իր ճաշակի պետք է կատարի ընտրություն: Լարին ու Զոանը հանդիպում են մահվանից հետո, եւ կարծես թե ընտանեկան սիրառատ կյանքը շարունակվում է նաեւ «այն աշխարհում», սակայն պարզվում է, որ Զոանի առաջին ամուսինը՝ Լյուքն էլ, որ շատ երիտասարդ ժամանակ էր զոհվել՝ Կորեական պատերազմի ժամանակ, այստեղ սպասել է ողջ ժամանակ: Լյուքի կերպարը մարմնավորել է Քալում Թյորները: Հանգուցյալները կարող են, իհարկե, այդ անցակետում մնալ, սակայն միայն որպես սպասարկող անձնակազմ՝ նոր ժամանածների հարցերով զբաղվող կոորդինատոր, բարմեն կամ պարզապես հավաքարար:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

6 ՏԱՐՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՏԻ ՔԱՆԴՎԱԾ ՀԱՏՎԱԾԸ ՉՎԵՐԱԿԱՆԳՆԵՑԻՆ

Մարդկանց կյանքի անվտանգության ապահովումն առաջնահերթ է: Այսպես է բոլոր կայացած պետություններում, սակայն ո՛չ Նիկոլ Փաշինյանի «Երկրի հակառակ կողմը» դարձած, շատ բաներով թարս գնացող, բայց «իրական» կոչված Հայաստանում: Հանրապետական նշանակության Իջեւան-Վազաշեն-Պառավաքար-Բերդ ավտոճանապարհի Վազաշեն-Պառավաքար հատվածը նախկին տարիներին հաճախ էր գնդակոծվում ճանապարհի դիմացի բարձունքների հենակետերում ամրացած ադրբեջանական զինուժի կողմից:

Միայն 2013 թվականի ընթացքում սահմանի այդ հատվածում ադրբեջանական կրակոցներից 3 զինվորական է զոհվել, եղել է 11 վիրավոր, որից երկուսը՝ քաղաքացիական անձ: Վաղուց արդեն անհրաժեշտություն էր սահմանի այդ հատվածում կառուցել ադրբեջանական գնդակոծություններից համեմատաբար ապահով, շրջանցիկ ավտոճանապարհ, ինչպես նաեւ՝ հիմնական ճանապարհին ադրբեջանական զինուժի գնդակոծություններից պաշտպանող անվտանգության պատ:

Վազաշեն-Պառավաքար հատվածում շրջանցիկ ճանապարհի շինարարությունը սկսվեց 2013 թվականին: Շինարարության մրցույթը շահեց «Իջեւանի ՃՇՇ» ՓԲԸ-ն: 2014թ. սեպտեմբերին փոխվեց ճանապարհի կառուցապատողը, գործը տրվեց Երեւանի «Խաչիար» ՍՊԸ-ին: Վազաշեն-Պառավաքար 3.2 կմ երկարությամբ, 6-7 մետր լայնությամբ շրջանցիկ ավտոճանապարհի շինարարությունը նախատեսված էր ավարտվել 2014թ. հունիսին, սակայն այն գործարկվեց նախատեսվածից մեկ տարի ուշ՝ 2015թ. հուլիսին: Այդ նպատակով պետական բյուջեից ի սկզբանե նախատեսված էր 535 միլիոն դրամ, 2014 թ. սեպտեմբերին այդ նպատակով պետբյուջեից լրացուցիչ հատկացվեց 55 միլիոն դրամ: Ճանապարհամերձ մի հատվածում, որը տեսանելի է ադրբեջանական դիրքերից, կառուցվեց երթեւեկն ադրբեջանական գնդակոծությունից պաշտպանող 150 մետր երկարությամբ եւ 5.5 մետր բարձրությամբ պատ: 2020 թվականին այդ պատի մի հատված քանդվեց, եւ ավտոճանապարհը, երթեւեկող ավտոմեքենաները, դրանցում գտնվող անձինք ադրբեջանական հենակետերի համար դարձան խոցելի թիրախներ: Սպասվում էր, որ անվտանգության պատի վնասված հատվածը շուտ կվերականգնվի: Սակայն գրեթե 6 տարի անց այն չի վերականգնվել: Դեռ 2023թ. մայիսի 8-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում էի արել, թե երբ է վերականգնվելու անվտանգության պատի քանդված հատվածը: Մարզպետը պատասխանել էր. «Վազաշեն-Պառավաքար շրջանցիկ ճանապարհի գաբիոնե հենապատի եւ երթեւեկամասի վերականգնումն ընդգրկված է Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար ավտոճանապարհի հիմնանորոգման ծրագրում, որը նախատեսված է իրականացնել 2023թ.-ին»: Անցել է ավելի քան 2 տարի: 2025թ. մայիսի 16-ին նույն խնդրով կրկին հարցում էի արել մարզպետ Ղալումյանին: Մարզպետը կատարել Տավուշի մարզպետին: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «2026թ. պետական բյուջեի միջոցներով ՀՀ ՏԿԵՆ պատվիրատվությամբ նախատեսված է իրականացնել Հ37/Մ-4/-Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի 0+000-կմ 17+300 հատվածի հիմնանորոգման (Կայանավան-Պառավաքար հատված) աշխատանքները: Գաբիոնե վնասված հենապատի վերականգնումը կիրականացվի նշված ծրագրի շրջանակներում»:

Պետբյուջեից հարյուրավոր միլիոն դրամներ են մսխվում ոչ արդյունավետ աշխատող պաշտոնյաներին պարգեւատրելու համար, այդ գումարների չնչին մասով սահմանին գտնվող անվտանգության պատի քանդված մասը կարող էր վերականգնվել, Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագիր կնքված չէ, ցանկացած ժամանակ Ադրբեջանը կարող է նախահարձակ լինել, այդ թվում՝ սահմանի նշված հատվածում, սակայն սահմանամերձ ճանապարհով երթեւեկի անվտանգության պատի քանդված հատվածը 6 տարում չեն կարողանում վերականգնել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 24.12.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԹԻՎ 1 ԻՇԱՄԵՂՈՒՆ ՄԵԶ ԴՐԵԼ Է ԻՇԱՏՌՏՌՈՒԿԻ, ԻՇԱԼՈԲՈՒ ԵՎ ԱՅԼ ՔՈՒԼԵՐԻ ՏԵՂ

Անմշակ, բարձիթողի դաշտերում հոտավետ ծաղկատեսակներ, հաճելի, սիրելի, օգտակար բույսեր հազվադեպ կհանդիպես: Այդ դաշտերում քարաքոսեր, տհաճ տեսքով ու հոտով զանազան քոլեր ու անպետք մացառներ են ծլարձակում: Դրանց մեջ խայտում ու փայլատակում են միամյա եւ բազմամյա, թիթեռնածաղկավորների կարգի իշատռտռուկը (հունարեն՝ onopordon՝ իշու փուք), իշակաթնուկը, իշալոբին, իշառվույտը, որոնց առէջներում թաթախված իշամեղվին «աշխարհը ճոճք է թվում, կյանքը՝ ծիրանագույն բուրաստան...»:

Մեր քաղաքական անմշակ, բարձիթողի դաշտում եւս անխաթար, անարգել աճում-բազմանում են «մտքի» իշատռտռուկը, իշակաթնուկը, իշալոբին, իշառվույտը, որ առատ հրամցվում են մեր ժողովրդին ամենօրյա ռեժիմով, եւ որոշ իշամեղուների էլ «աշխարհը ճոճք է թվում, կյանքը՝ ծիրանագույն բուրաստան...»:

Իր համար հենց էնպես չի քնում մեր երկրի առաջնորդը: Քուն, թե արթուն՝ նրա ճաճանչափայլ միտքը ցընկնում է նորանոր ցնդաբանություններ: Նրա համար կարեւոր չէ, թե ինչպես կընդունվեն դրանք: Վստահ է, որ իր աղանդի հետեւորդ իշամեղուները ցնծությամբ կընդունեն ամեն զառանցապատիր միտք: Մտածող մարդիկ էլ ... Է՛, թող մտածեն՝ ի՛նչ կուզեն: Կարեւորը՝ մտածեն ու արհամարհանք-ատելությամբ մշտապես՝ ամեն օր ու ամեն ժամ, մտքով իր հետ լինեն: Իր «մեծության» մասին խորհեն:

Եկեք լսենք նրա տիտանական մտքի հերթական գոհարներից.

1. «Քաղաքացիներին հաճոյանալու համար հոսանքի գինը չպիտի իջեցնել, որպեսզի 3 տարի հետո պրոբլեմ չառաջանա...»: Բա՛մ: Խորասուզվիր մտքի այս ջինջ օվկիանոսի ջրերում ու փորձիր բան հասկանալ: Դժվար թե հասկանաք: Խորքում պղտոր է ամեն ինչ: Աննախադեպ ինֆլյացիայի ու գների բարձրացման պայմաններում մտքի տիտան մեր առաջնորդը գտնում է, որ չի կարելի ժողովրդաշահ գործ ձեռնարկել, ինչը հանձնաժողովին առաջարկել է ՀԷՑ-ի նախկին տնօրինությունը:

Դրանից մի քանի օր առաջ էլ նա ու իր համիարզները մեզ վստահեցնում էին, որ եթե թոշակներն ու աշխատավարձերը բարձրացնեն... ժողովուրդն ավելի վատ կապրի:

Այո, մեր կառավարությունն ամեն վայրկյան մեր մասին է մտածում: Ու դա լավ իմացիր, հայաստանցի՝ էլեկտրաէներգիայի սակագինը եթե իջեցնեն... դու առավել վատ կապրես...

Դե, տեսնո՞ւմ եք, սիրելի բարեկամներ, մեր առաջին իշամեղուն մեզ դրել է ճիշտ որ իշատռտռուկի, իշառվույտի, իշալոբու եւ նման տեսակի քոլերի տեղ: Չեմ՛ք հավատում: Այդ դեպքում լսեք տիեզերահռչակյալ մտքի հաջորդ զեղումը.

2. «Ինձ համար ցանկալին ՀԷՑ-ի պետականացումն է, բայց դա բյուջեի համար ծախս է...»:

Այ բազմապրոֆիլ իշամեղու, ՀԷՑ-ի սեփականատիրոջը, ազգային բարերարին բանտախուց ուղարկելուց առաջ չգիտեի՞ր, որ դա մոտ 15 միլիարդ դոլարի վարկերը սպասարկող, կիսադատարկ պետական բյուջեի համար լրացուցիչ ծախս է լինելու: Դրա տակից ո՞նց ես... Ներիր, իմ ֆյուրեր, ուզում էի ասել՝ ո՞նց ես դուրս գալու: Ախր, ամեն հիմարի համար պարզից պարզ է, որ բազմաչարչար մեր «տերը» չէ, որ պիտի ծանր բեռի տակից դուրս գա: Առոք-փառոք իրենց համար ապրող մեր համաքաղաքացիներն ի՞նչ բանի են լինելու, անմշակ դաշտում հո իշամեղու չե՞ն փնտրելու: Եթե այդ իշամեղուն չգտնեն էլ, մեծ ցավ չէ: Մեր մտքի ճառագայթող աստղն ամեն ինչի ճարը հո գիտի ու գիտի: Սրա ճարն էլ գիտի ու հայտարարել է. «Նոր ներդրողներ կներգրավենք...» ՀԷՑ-ի համար:

Ուզում ես հարց տալ՝ այ մտքի ավերակ, Սամվել Կարապետյանն ի՞նչ պակաս ներդրող է, որ նրա ձեռքից ուզում ես խլել ու ամբողջ ազգիս մի նոր նեղության մեջ գցել: Բարեկամ թուրքի՞ն ես ուզում մեր մեջ «ներդնել»: Վստահ եմ՝ ինչպես նախկին բոլոր՝ դիվային այդ ծրագիրն էլ չի հաջողվելու:

Իսկ մինչ այդ՝ միջազգային արբիտրաժի որոշումն անտեսելու պատճառով նախատեսված հսկայական տույժ-տուգանքները մեր ջանից կպոկես, հաստատ:

«Մեր» ասելով՝ ժողովուրդ, հասկացիր՝ քո ջանից կպոկի: Բա՛մ, հո իր ջանից չի՞ պոկելու, իր ջանն «ազիզ» է թե՛ իր համար, թե՛ իր իշամեղվախմբի ու... քանի որ նման պատուհասին դեռ թողնում ենք մեր գլխավերեւներում ազատ ճախրի:

Իհարկե, լավ կլինի, եթե մեր հասարակության (հասարակություն, որ երկարատեւ այլասերման ու ապականման է ենթարկվել) յուրաքանչյուր անդամ մտքում մի լավ չափուձեւի, մի քիչ փիքր անի մեծն առաջնորդի թե՛ այսօրվա, թե՛ մեր գլխին հարահոսով թափվող վաղվա զարմանահրաշ զառանցանքների մասին եւ, որպես բանական մարդ, աշխատի դուրս գալ այն կարգավիճակից, որը մեկ արտահայտությամբ կարելի է կոչել՝ իշատռտռուկի առէջներում թավալվող իշամեղվի ճակատագիր:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am